AZG NEW PDF.qxd 01/06/2010 22:29 Page 1

Ազգ
Azg
2 ՅՈՒՆԻՍ 2010 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 100 (4480)
ISSN: 1829-1651

## ՄԱԿ-ի ԱԽ-ն պահանջեց անցկացնել «Ազատության նավատորմիղի» կալանման անկախ քննություն

12 ժամ տեւած Անվտանգության խորհրդի արտակարգ նիստում հատկապես խիստ արտահայտություններով հանդես է եկել Թուրքիայի արտգործնախարար Դավութօղլուն, մինչդեռ Իսրայելի մերձավորագույն դաշնակից ԱՄՆ-ը խուսափել է կտրուկ ձեւակերպումներից, նշում է BBC-ն:

Իսրայելի ներկայացուցիչը պնդել է, թե զինվորականները դիմել են ինքնապաշտպանության եւ կրակ են բացել պաղեստինամետ ակտիվիստների վրա: Վերջիններս իբր «դանակներով, մահակներով եւ այլ զենքերով» հարձակվել են մարդասիրական «նավատորմիղը» գրոհած իսրայելցի զինծառայողների վրա: Խոսքը մասնավորապես «Մավի Մարմարա» թուրքական նավի մասին է, որտեղ կային 679 պաղեստինամետ ակտիվիստներ եվրոպական տարբեր երկրներից: BBC-ի տվյալներով, նրանցից միայն 50 հոգի են կամովին համաձայնել հեռանալ եւ մուտք չգործել Գազա: 30 վիրավորներ մնում են հիվանդանոցներում: Սա նշանակում է, որ տարբեր երկրների 600-ից ավելի ներկայացուցիչներ կալանավորված են Իսրայելի տարածքում եւ ներկայումս ենթարկվում են հարցաքննությունների:

ՄԱԿ-ի ԱԽ նիստում Թուրքիայի արտգործնախարար **Ահմեդ Դավութօղլուն** իսրայելցիների գործողությունները անվանեց «ելուզակություն եւ ծովահենություն»: ԱԽ 15 անդամների մեծ մասը դատապարտեց Իսրայելին: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար **Բան Կի Մունը** իր հերթին պահանջեց անցկացնել միջադեպի անկախ քննություն:

Ռուսաստանը, Ֆրանսիան, Չինաստանը եւ մի շարք այլ երկրներ Իսրայելին կոչ արեցին վերջ դնել Գազայի շրջափակմանը, որը շարունակվում է արդեն 3 տարի:

## Էրդողանը խոսում է խղճից ու միջազգային իրավունքից

Գազայի ափերի մոտ տեղի ունեցածի առիթով երեկ արտահայտվել է Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը իր գլխավորած կուսակցության նիստում՝ Իսրայելի գործողությունները իսկական հանցագործություն անվանելով անզեն մարդկանց դեմ (ինչպիսի որակում՝ գուցե հենց նրա պապը հայ անզեններին սպանողներից մեկն է եղել 1915-ին). «Դա հանցագործություն է ոչ միայն այդ մարդկանց, այլեւ միջազգային իրավունքի եւ խղճի դեմ», ասել է նա՝ որեւէ անգամ այդ միջազգային իրավունքն ու խիղճը չհիշելով Հայոց ցեղասպանությունը ժխտելիս: Էրդողանը նկատել է , թե Թուրքիան պատրաստ է միջազգային իրավունքով սահմանված քայլեր ձեռնարկել. «Որքան անկեղծ ենք ընկերության մեջ, այնքան սկզբունքային ենք թշնամանքի մեջ, թող ոչ ոք չփորձի մեր համբերությունը: Թուրքիայի նման գործընկեր կորցնելն արդեն մեծ պատիժ է», ասել է նա՝ հրեաներին հիշեցնելով պատմության ընթացքում մշտապես թուրքերից ստացած աջակցության մասին եւ սպառնալով, որ Իսրայելի արյունոտ վարչակազմը պետք է պատժվի: Էրդողանը հայցել է հանրության դատապարտող կարծիքը հանցագործություն կատարողների հանդեպ:

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Կրկին զոհեր Հերացու փողոցում

Երկուշաբթի գիշերը, ժամը 12-ից քիչ անց, աշխատանքից տուն վերադառնալիս, Մխիթար Հերացու փողոցում, այնտեղ՝ որտեղ թիվ 1 հիվանդանոցի դարպասի առջեւից «զեբրը» երկարում է մինչեւ դիմացի մայթի բենզալցակայանը, կրկին ավտովթար էր: Ճանապարհը փակած պետավտոտեսչության մեքենաների առատությունից կարելի էր ենթադրել, որ այս անգամ ավելի ողբերգական էր պատահածը: Եվ իրոք, հասնելով դեպքի վայր՝ փշաքաղիչ տեսարան պարզվեց: Պողոտայի հենց մեջտեղում, ասֆալտի վրա, արյունլվա եւ արդեն անշունչ դիակ էր աղջկա, անդամահատված ոտքերով: Իսկ ճանապարհի աջ կողմում, մայթին մոտ, մի ուրիշն էր անշարժ պառկած, որին նայելու քաջություն չունեցա: Շտապօգնության մեքենան դեռ տեղ չէր հասել, իսկ ոստիկանները երեւի որեւէ բան չունեին զոհերի մարմինը ծածկելու: Հետո միայն իմացա, որ երկրորդն էլ աղջիկ էր, երկու զարմուհիներ, որոնց մի քանի անգամ տեսել էի հարեւան նպարեղենի խանութում. ուսանողներ էին, Գյումրիից, վարձով էին մնում մեր հարեւան շենքում, երեք ընկերուհիներով: Երրորդը բարեբախտաբար տանն էր մնացել, հաջորդ օրը քննության էր:

Առաջին անգամը չէր, որ այս նույն փողոցի վրա ականատես էի լինում վրաերթի հետեւանքների: Դեռ 7 ամիս առաջ, մի քիչ ավելի վերեւ, որտեղով անցնում է հետիոտնի համար կառուցված կամուրջը, հենց դրա տակ, միջին հասակի մի այր ու կին էին ընկել ավտոմեքենաների տակ: Մահացած կնոջն արդեն տարել էր շտապօգնության մեքենան, երբ ես հասա, մինչդեռ փողոցի մեջտեղում ընկած տղամարդուն շուրջ 20 րոպե բժշկական օգնություն ցույց տվող չեղավ:

Հերացու փողոցի բնակիչներից յուրաքանչյուրը կարող է պատմել մահացու ելքով նման 8-9 դեպք՝ սեփական աչքով տեսած կամ հարեւանի նկարագրածով: Եվ այդ բոլորը՝ վերջին 2 տարվա ընթացքում, երբ երկար փառաբանումներով բացվեց «արագընթաց ճանապարհ» հորջորջված Հերացի-Մյասնիկյան պողոտան՝ իր թունելներով, կամուրջներով, թեք ու հարակից անցումներով, միմյանց հատող, անգամ խաչվող ճանապարհներով: Մի ամբողջ հանգույց, որը, ճիշտ է, զգալիորեն նվազեցրեց խցանումները, սակայն ծայրից ծայր դարձավ վթարային շրջակայքի բնակիչների համար՝ սուրացող մեքենաների առատությամբ, շփոթեցնող անցումներով եւ... աջ ու ձախ տուգանող պետավտոտեսուչներով: Բոլորովին արհամարհվեցին Հերացու փողոցից մինչեւ «Բելաջիո» ռեստորան երկարող բազմաթիվ շենքերի հազարավոր բնակիչները: Անտեսվեց այն կարեւոր հանգամանքը, որ ձախ կողմում գտնվող հիվանդանոցները, ծննդատունը, մանկական եւ այլ կլինիկաները, ատամնաբուժարանը նույնպես մարդկանց համար են, ովքեր կարիք ունեն փողոցի մի մայթից մյուսն անցնել երբեմն մանկասայլակներով, երբեմն՝ հենակներով ու ձեռնափայտերով, երբեմն՝ գրկի երեխաներով:

Ճիշտ է, հետիոտնի համար կառուցվեց երկու հարկի բարձրությամբ մի կամուրջ, որից օգտվել կարող են միայն... կարողացողները, մեկ էլ՝ աշխատանքի կամ դասի չշտապողները: Մնացյալները կարող են կա՛մ վազքով հատել լայն ճանապարհը եւ կամ իջնել ցած մի 50 մետր եւ ամբողջովին վարորդների ողորմածությանը հանձնելով իրենց կյանքը՝ «զեբրով» անցնել ճանապարհի մյուս կողմ: Այսինքն՝ երկու դեպքում էլ՝ 50/50՝ մահ-կյանք հարաբերություն: Իսկ երեկոյան ուշ ժամերին, երբ երթեւեկից բեռնաթափված փողոցով անցնող ջահել կամ ջիփավոր վարորդներին թվում է, որ իրենք շումախերներ են, այդ կյանք-մահ հարաբերությունը փոխվում է 25/75-ի՝ հօգուտ երկրորդի եւ ի դժբախտություն առաջինի, ինչպես այն ուսանողուհիների պարագայում, որոնք երկուշաբթի գիշեր անմեղ զոհը դարձան վարորդների, նախագծողների եւ վերահսկողների անպատասխանատվության:

Հ. ԱՎԵՏԻՔՅԱՆ

## Դմիտրի Մեդվեդեւը Հայաստան կգա օգոստոսին

### *Դոնի Ռոստովում՝ Սարգսյան-Մեդվեդեւ հանդիպում*



Ըստ Հայաստանի նախագահի մամլո գրասենյակի՝ երեկ Դոնի Ռոստովում տեղի է ունեցել Հայաստանի եւ Ռուսաստանի նախագահներ Սերժ Սարգսյանի եւ Դմիտրի Մեդվեդեւի հանդիպումը: Քննարկումները վերաբերել են հայ-ռուսական ռազմավարական գործընկերությանը, տնտեսական համագործակցությանը, հումանիտար ոլորտում շփումների ակտիվացմանը, միջազգային եւ տարածաշրջանային խնդիրներին. «Մենք որպես գործընկերներ, ռազմավարական դաշնակիցներ պետք է հաճախ հանդիպենք, ըստ էության այդպես էլ վարվում ենք», ասել է **Դ. Մեդվեդեւը**՝ որպես օրինակ նշելով նախագահ Սարգսյանի այցը Մոսկվա, Հայրենական պատերազմի 65-ամյակին: Նա նաեւ տեղեկացրել է եվրոպական գործընկերների հետ իր մի քանի հանդիպումների արդյունքների մասին՝ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացի համատեքստում: Հայաստանի նախագահը աշխատանքային հանդիպումների ձեւաչափը լավ է համարել՝ Դոնի Ռոստով այցելության հրավերի համար շնորհակալություն հայտնելով եւ նշելով այստեղ առկա հայկական մեծ սփյուռքի մասին, որի ներկայացուցիչների հետ նա երեկ հանդիպել է, իսկ Մեծ հաղթանակի միջոցառումներ փայլուն կազմակերպման եւ ջերմ ընդունելության համար էլ ասել է. «Ես հպարտ էի՝ հզոր շքերթը մեր ընդհանուր պատմության եւ մարտական եղբայրության հրաշալի հիշեցում էր»:

Հանդիպման ընթացքում կողմերը պայմանավորվել են օգոստոսին Ռուսաստանի նախագահ Դմտրի Մեդվեդեւի Հայաստան կատարելիք այցի վերաբերյալ:

Ս. Խ.

## Ցեղասպանության թեմայով սեմինար Շվեդիայում

Մայիսի 31-ին Ստոկհոլմում կայացել է Միջազգային իրավունքի ասոցիացիայի շվեդական մասնաճյուղի կազմակերպած սեմինարը «Ցեղասպանություն Օսմանյան կայսրությունում 1915 թվականին. կենդանի պատմություն, իրավական խնդիրներ, վաղեմության իրավունք եւ պատասխանատվություն» խորագրով:

ԱԳՆ-ի տեղեկացմամբ, սեմինարը նախագահել է միջազգային իրավունքի փորձագետ եւ Շվեդիայի Միջազգային իրավունքի ասոցիացիայի նախագահ Օվե Բրինգը: Միջոցառմանը մասնակցել եւ ելույթով հանդես է եկել Շվեդիայում Հայաստանի դեսպան **Արա Այվազյանը**, Դունդեի համալսարանի միջազգային իրավունքի պրոֆեսոր **Կաջ Հոբերը** եւ պատմաբան ու Armenica.org կայքի գլխավոր խմբագիր **Վահագն Ավետյանը**, ինչպես նաեւ՝ շուրջ 50 մասնակիցներ, ներառյալ Շվեդիայի արտաքին քաղաքական գերատեսչության ներկայացուցիչներ, Շվեդիայի Մարդու իրավունքների ասոցիացիայի անդամներ, գիտնականներ, հայկական, թուրքական եւ ասորական համայնքների ներկայացուցիչներ:

Դեսպան Այվազյանը, ներկայացնելով Ցեղասպանության պատմությունը, անդրադարձել է նաեւ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացին եւ ցյուրիխյան արձանագրություններին, դրանց վավերացման կասեցման պատճառներին:

Պրոֆեսոր Հոբերը հակիրճ ներկայացրել է միջազգային իրավունքում վաղեմության վերաբերյալ իր ուսումնասիրությունները: Վահագն Ավետյանի ելույթը նվիրված է եղել պետական ինքնության, իրավահաջորդությանը եւ պատասխանատվությանը:

Ա. Հ.

## Ընտրական հին ու նոր մեխանիզմներ. Կովկասում ձեռագիրը չի փոխվում




Թբիլիսիի քաղաքապետի եւ քաղաքային խորհրդի անդամների մեծամասնական եւ համամասնական ընտրություններում վրացական ընդդիմությունն ընդունել է իր պարտությունը, ընդգծելով, որ իշխանության կողմից վարչական, ֆինանսական ռեսուրսների առավելագույնս օգտագործումն ու կեղծիքների իրականացումը հնարավորություն չեն տալիս մրցակցելու: «**Ազգի**» հետ հեռախոսազրույցում այսպիսին ներկայացրեց իրավիճակը հետընտրական Թբիլիսիում տեղական դիտորդական առաքելություն իրականացնող «Բազմազգ Վրաստան» հասարակական շարժման ղեկավար **Առնոլդ Ստեփանյանը**:

Նրա ներկայացմամբ, կազմակերպության 320 տեղական դիտորդներից 160-ը իրենց առաքելությունն իրականացրել են հայաբնակ Սամցխե-Ջավախեթիում, իսկ 180-ը՝ ադրբեջանաբնակ Քվեմո Քարթլիում: Դիտորդական առաքելության ընթացքում խախտումներն ու հատկապես լցոնումները կատարվել են այնպես, որ անգամ հնարավոր է եղել բազմաթիվ տեսագրություններ անել այդ փաստերի առնչությամբ:

«Ընտրություններն ըստ էության անցել են այնպես, ինչպես եւ նախկինում խորհրդարանականը կամ նախագահականը: Առավելապես խախտումներից կիրառվել են լցոնումները», ասաց Ստեփանյանը: Նրա խոսքերով, ի շարս այլ խախտումների, այս անգամ հայաբնակ եւ ադրբեջանաբնակ տարածքներում վերահսկվել է նաեւ ընտրողների մասնակցությունը, այսինքն՝ հետեւել են ընտրատեղամասեր հաճախումներին ու վարվել ըստ այդմ:

Ստեփանյանի հավաստմամբ, ճնշումներ գործադրվել եւ դեռ շարունակվում են՝ սպառնալիքի ու ահաբեկման փորձերի տեսքով, դիտորդական առաքելություն իրականացրածների նկատմամբ:

Ամեն դեպքում, չնայած տարածաշրջանների առումով պաշտոնական տվյալներ դեռեւս չեն հաղորդվում, սակայն, ըստ Ստեփանյանի, Ախալքալաքի շրջանում այլընտրանքային հաշվարկներով առաջին տեղում եւ մյուսներից մեծ տարբերությամբ իշխող «Ազգային շարժում» կուսակցությունն է, իսկ 2-րդ տեղում թերեւս ընդդիմադիր «Ազգային խորհուրդը»:

Առնոլդ Ստեփանյանը նշեց, որ թեեւ հավանական էին համարվում բողոքի ակցիաներն ու դժգոհության արտահայտման այլ ձեւերը, սակայն Թբիլիսիում իրավիճակը հանդարտ է: Նրա հետ մեր ընդարձակ հարցազրույցը կարդալ 5-րդ էջում:

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

AZG NEW PDF.qxd 01/06/2010 22:13 Page 1







# «Ես արդեն տնկել եմ իմ ծառն ու եկել եմ այստեղ պահպանելու բնությունը»

Մանկական երգերի, խաղերի, նկարների միջոցով երեկ Ուսանողական այգին վերածվել էր հսկայական խաղահրապարակի, ուր բազմաթիվ փոքրիկներ եկել էին իրենց տոնը նշելու եւ պահանջելու՝ պահպանել «Ուսանողական այգին»: Թեպետ քիչ այն կողմ չէր դադարում շինարարությունը, սակայն դա չխանգարեց, որ այգում տոնը ստացվեր: Հունիսի մեկը Ուսանողական այգում նշելը պատահական չէր: Այգում կատարվել են ծառահատումներ եւ այնտեղ կառուցում են երկու սրճարան:

«Երեխաներն էլ իրավունք ունեն ապրելու մաքուր էկոլոգիական քաղաքում: «Ուսանողական այգին» բետոնացնելով խախտում են նրանց իրավունքները: Այգին երեխաներինն է, եւ նրանք եկել են իրենց լեզվով բացատրելու, թե ինչպես են սիրում բնությունը: Սրանով ոչ միայն փորձում ենք գրավել քաղաքապետարանի ուշադրությունը, որ դադարեցնեն սրճարանների շինարարությունը, այլեւ երեխաներին մանուկ հասակից սովորեցնում սիրել բնությունը», նկատում է «Մենք ենք այս քաղաքի տերը» նախաձեռնության անդամ **Արեւիկ Ավետիսյանը**:

Նա մեծերին հիշեցնում է մանուկների սիրելի Փոքրիկ Իշխանին, որ ամեն կերպ պահպանում էր իր վարդը, իր բնությունը, մինչդեռ մարդիկ փորձում են իրենց հրաշք մոլորակը ոչնչացնել:

Առավոտյանից բազմաթիվ բարեմաղթանքներ ու նվերներ ստացած 11-ամյա **Գայանե Հակոբյանը** միացել է իր ավագ ընկերներին՝ պահանջելով դադարեցնել շինարարությունն ու չքանդել այգին: Իր պահանջը նա արտահայտում է նկարով: «Տորթակի մեջ երկիր մոլորակն է, որ պինդ պահում է մարդկային ձեռքը, փորձում պաշտպանել բնությունը, իսկ տորթակից դուրս շինարարությունն է, կացիններ, բետոններ, որոնցից պետք է ազատվել», ներկայացնում է Գայանեն:

«Կարծես երեխաները այգում փորձում են պաշտպանվել մեծերից, որովհետեւ մեծերը նրանց զրկում են մաքուր եւ առողջ միջավայրից, վերացնում կանաչ տարածքները, աղտոտում օդը, ջուրը: Նրանք այսօր եկել են «Ուսանողական այգի» եւ կոչերով, ուղերձներով, խնդրանքներով ու պահանջներով փորձում են դարձի բերել եւ ուղղել սխալ ճանապարհ ընկած նավի ուղղությունը: Բետոնապատվում է այն վայրը, որ պետք է խորհրդանշի կենդանություն: Այգին բնություն է, կենդանություն, բայց մենք այն շրջապատում ենք արհեստական, բետոնե սրճարաններով», նկատեց հասարակական գործունեություն ծավալող **Մարիամ Սուխուդյանը**:

«Եթե բնություն չլինի, թթվածին էլ չի լինի: Բնությունը հարկավոր է մարդկանց, որ պաշտպանեն իրենց երկիրը, որ իրենց քաղաքն ու բակը գեղեցիկ լինի: Ամեն մարդ պետք է գոնե մեկ ծառ տնկի, որպեսզի գեղեցկացնի աշխարհը: Եթե Հայաստանում ամեն մեկը մի ծառ տնկի, Հայաստանը կկանաչապատվի եւ կգեղեցկանա: Ես արդեն տնկել եմ իմ ծառն ու եկել եմ այստեղ պահպանելու բնությունը»: Սա էլ 11-ամյա Արմենի համոզմունքն է:

Միջոցառման մասնակից բնապահպան **Կարինե Դանիելյանն** էլ ցավով արձանագրում է, որ շարունակում ենք կորցնել հասարակության համար նախատեսված կանաչ տարածքները: «Ուսանողական այգու հետ կապվածը ոչ միայն էկոլոգիական, այլեւ բարոյական խնդիր է: Եթե այստեղ դրված է Վիկտոր Համբարձումյանի արձանը, ապա այգին պետք է մեզ համար լիներ սրբավայր: Ցավալի է այս՝ սրճարանային իրողությունը, բայց ուրախ եմ, որ երիտասարդները էստաֆետը վերցրել են եւ խնդիրը շատ ավելի ակտիվ են բարձրացնում, քան մենք»:

«Մեր երեխաներից խլում են կանաչ մի այգի, որ պատկանում է իրենց: Ահա թե ինչի համար են այս երեխաները պայքարում: Սա իրենց հողն է եւ այն տվել են ինչ-որ մեկին, ով մեծ գումարներ է վճարել: Եվ տվել են անօրինական կերպով, այգին հանրային սեփականություն է, որեւէ մեկը վաճառելու եւ ծառերը կտրելու իրավունք չունի», ասաց «Էկոլուր»-ի տնօրեն **Ինգա Զարաֆյանը**:

«Ուսանողական այգու» խնդիրը բարձրաձայնվում է շուրջ երկու ամիս, սակայն խնդիրը որեւէ կերպ չի լուծվում: Հունիսին հանրային խորհրդում տեղի կունենան քննարկումներ մայրաքաղաքի էկոլոգիական խնդիրների լուծման վերաբերյալ, որտեղ կքննարկվի նաեւ այգու հարցը:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## Համագործակցություն ի շահ երեխաների

**Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ Գյումրիում մի շարք տոնական միջոցառումներ էին կազմակերպվել: Դրանցից մեկը քաղաքի նախակրթարանների, մարզական ու մշակութային հաստատությունների սաների մասնակցությամբ կենտրոնական հրապարակում տեղի ունեցած ավանդական գունագեղ ու բազմամարդ շքերթն էր:**

**Հետաքրքրական նախաձեռնությամբ էր հանդես եկել նաեւ «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությունը՝ համագործակցության հիմնաքար դնելով Էջմիածնում գործող «Հայ միասնության խաչ» կազմակերպության հետ: Գյումրու Ժողովրդական ճարտարապետության եւ քաղաքային կենցաղի թանգարանի բակում կազմակերպվել էր համատեղ միջոցառում Կարիտասի «Փոքրիկ իշխան» երեխաների պաշտպանության սոցիալական կենտրոնի եւ Էջմիածնի նշված ՀԿ-ի սաների մասնակցությամբ:**

**Երեխաների բարեկեցության խնդիրը «Հայկական Կարիտասի» գործունեության ռազմավարական ուղղություններից մեկն է, եւ այս միջոցառումը կազմակերպվել էր նրա «Դժվարին իրավիճակներում ապրող երեխաների եւ նրանց ընտանիքների զարգացում» ծրագրի շրջանակներում՝ ի նպաստ երեխաների սոցիալական համերաշխության: Գեղեցիկ միջոցառման ընթացքում Գյումրու «Փոքրիկ իշխան» կենտրոնի եւ Էջմիածնի ՀԿ-ի «Մանուկների թագավորության» միջեւ խորհրդանշորեն կնքվեց համագործակցության հուշագիր, որը պետք է նպաստի փոքրիկ իշխանների ու իշխանուհիների զարգացմանը եւ մանուկների թագավորությունների հզորացմանը: Պարային համարներն ու ընդհանուր շուրջպարը, էջմիածինցի երեխաների ցուցադրած «Սուտլիկ որսկանը» ուրախ եւ արվեստով ներկայացումը, փոխադարձ շփումներն ու նոր ծանոթությունները հետաքրքիր դարձին մասնակից երեխաների օրը, նրանց բազմաթիվ հաճելի պահեր պարգեւեցին:**

**Երկու կառույցները հետագայում եւս կկազմակերպեն երեխաների մշակութային զարգացմանն ուղղված համատեղ միջոցառումներ:**

Գ. Ս.

## Ձերբակալվել է «Հայկական ժամանակ» օրաթերթի լրագրողը

Երկուշաբթի ուշ երեկոյան ձերբակալվել են «Հայկական ժամանակ» օրաթերթի լրագրող Անի Գեւորգյանը, նրա եղբայր Սարգիս Գեւորգյանը, ՀԱԿ ակտիվիստ Դավիթ Քիրամիջյանը: Ուրիշ տասնյակ մարդկանց հետ նրանք ոստիկանության Կենտրոնի բաժին բերման են ենթարկվել Ազատության հրապարակի շրջակայքից, որտեղ ընդդիմադիր ակտիվիստները փորձել են բողոքի միջոցառումներ կազմակերպել: Ըստ փաստաբան **Լուսինե Սահակյանի**, որը փաստաբան Գիվի Հովհաննիսյանի հետ երկուշաբթի գիշերը եղել է ոստիկանության բաժանմունքում, Անի Գեւորգյանը ձերբակալվել է իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու կամ դրա սպառնալիքի կասկածանքով, քրեական օրենսգրքի 316 հոդվածի առաջին մասի հատկանիշներով, իսկ մյուս երկուսի ձերբակալությունը խուլիգանության կասկածանքով է, 258 հոդվածի հատկանիշներով: Անի Գեւորգյանին ձերբակալելու 72 ժամը լրանում է հունիսի 3-ին, ժամը 18:30-ին: Այդ ժամկետում պարզ կլինի՝ լրագրողին մեղադրանք առաջադրվելո՞ւ է, թե՞ նրան ազատ կարձակեն

## 14-ամյա հայուհին ժամանակակից պարերի չեմպիոնուհի Ուկրաինայում

14-ամյա Ջեմմա Պետրոսյանը առաջին տեղն է գրավել վերջերս Ուկրաինայում անցկացված ժամանակակից պարերի «IDF» պարային շոուի աշխարհի գավաթի մրցույթում եւ ժամանակակից պարերի «Open Evro dance 2010» մրցույթում: Ուկրաինիայի ժամանակակից պարերի բաց առաջնության կրկնակի չեմպիոն եւ 2007-2010 թթ. Ղրիմի ժամանակակից պարերի բազմակի չեմպիոն Ջեմմա Պետրոսյանը ծնվել է Սիմֆերոպոլում, երեւանցիների ընտանիքում: Սովորում է Սիմֆերոպոլի թիվ 1 գիմնազիայում, որտեղ ժամանակին սովորել են Հովհաննես Այվազովսկին, Ալեքսանդր Սպենդիարյանը: Արդեն չորս տարի է, ինչ Ջեմման հաճախում է «Պարի մոլորակ» ժամանակակից սպորտային պարի պորոցը:

## Բոլոր երեխաներն էլ արժանի են յուրահատուկ վերաբերմունքի

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐ

**Հունիսի 1-ին՝ Երեխաների պաշտպանության միջազգային օրը, մայրաքաղաքի գրեթե կենտրոնական փողոցներում տոնական մթնոլորտն ապահոված էր:**

**Կենտրոն վարչական շրջանը՝ աջակցությամբ Գագիկ Գյանջումյանի, Մոսկովյան պուրակում կազմակերպել էր տոնական օրվան նվիրված միջոցառում: «Սյուրպրիզ» նաեւ միջոցառման կազմակերպիչներից էր, նշեց, որ հրավիրել էին նաեւ տարբեր դպրոցների ու մանկապարտեզների երեխաների, որոնք էլ իրենց ներկայությամբ առանձնակի աշխույժ մթնոլորտ էին ստեղծել Մոսկովյան պուրակում:**

**Մի քանի քայլափոխ ներքեւ՝ Մոսկովյան սրճարանում, դարձյալ հնչում էր մանկական ուրախ երաժշտություն, երեխաները խաղում էին, նկարում: Այս միջոցառման կազմակերպիչները, սակայն, երիտասարդ ակտիվիստներն էին, որոնք որոշել էին օգնել Ուռուցքաբանության ազգային կենտրոնում բուժվող քաղցկեղով հիվանդ երեխաներին:**



**երգչախումբը, «Հայաստա» պարային համույթը, «Լապտեր» տիկնիկային թատրոնի դերասանները եւ շատ ուրիշներ իսկապես բարձրացրին թե՛ մեծերի, թե՛ փոքրերի տրամադրությունը:**

**Միջոցառմանը մասնակցում էին Իգիթյանի անվան գեղագիտական եւ Կոջոյանի անվան նկարչական դպրոցների սաները, «Հույսի կամուրջ» ՀԿ-ի երեխաները:**

**Եղավ նաեւ նկարչական մրցույթ, եւ հաղթող երեխաները ստացան մրցանակներ:**

**Նկարիչների միության երիտասարդական միավորման նախագահ Աննա Հարությունյանը, որը**

**«3 օր շարունակ հայտարարությունների միջոցով գումար ենք հավաքել եւ հեռուստացույց գնել այդ կենտրոնում բուժվող երեխաների համար,- ասաց երիտասարդ ակտիվիստ Արման Ղարիբյանը,- քաղցկեղով հիվանդ երեխաները կարող են բուժվել, նրանք դատապարտված չեն մահվան, եւ մենք պետք է օգնենք նրանց»:**

**Այստեղ եւս եղավ նկարչական մրցույթ, եւ վերջում քաղցկեղից արդեն բուժված երիտասարդները մրցանակներ հանձնեցին քաղցկեղով հիվանդ երեխաներին՝ մրցույթի մասնակիցներին:**

**Ուռուցքաբանության ազգային կենտրոնի մանկական ուռուցքաբանության բաժանմունքի ղեկավար Գրիգոր Բադալյանը, որը ներկա էր միջոցառմանը, նշեց. «Արդեն 2 ամիս համագործակցում ենք ակտիվիստների հետ, եւ մարդկանց անտարբերությունը կոտրելը մեր համագործակցության նպատակներից մեկն է»:**

Ի. Պ.


«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353

Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի


Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:


"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010


## Ավտոպահովագրումը Հայաստանում կստեղծի հազարավոր աշխատատեղեր

**Ավտոքաղաքացիական պատասխանատվության պարտադիր ապահովագրության (ԱՔՊՊԱ) ներդրումով Հայաստանի ապահովագրական շուկայի ծավալները կեռապատկվեն, «Արմինֆո» գործակալության թղթակցի հետ զրույցում նման կարծիք է արտահայտել «Ինգո Արմենիա» ապահովագրական ընկերության ղեկավար Լեւոն Ալթունյանը: Նրա խոսքերով, ապահովագրական շուկայի այս նոր հատվածի նորմալ սպասարկումն ապահովելու համար շուկայի մասնակիցների առջեւ ի հայտ կգան լուրջ խնդիրներ, կապված կադրային պոտենցիալի շատ համալրման հետ: Նա գտնում է, որ ընկերությունների ներկայիս կադրային, հիմնական կորիզը, որը կազմում է մոտ 300 աշխատակից, կաճի եւս 50-60 տոկոսով: Ընդ որում, գործակալների թիվը, որոնք անմիջականորեն կզբաղվեն ապահովագրական պոլիսների վաճառքով, 2-3 անգամ կաճի, իսկ հետագայում հնարավոր է, որ տասնապատկվի:**

**Ինչպես նշում են «Ինգո Արմենիայում», ընկերության գործակալական ցանցը կընդլայնվի նաեւ ֆիզիկական անձ գործակալների ներգրավման հաշվին, որոնց թիվը 2010 թվականի ավարտին կհասնի 1,5 հազարի:**

**Նախնական տվյալներով, Հայաստանի ԱՔՊՊԱ շուկան գնահատվում է շուրջ 35 մլն դոլար (300 հազ. ավտոմեքենա եւ մոտ 30 հազ. դրամ ապահովագրական պրեմիա) եւ ապահովագրողների համար ամենահեռանկարային հատվածն է: Ռուսական կապիտալով ընկերությունների («Ինգո Արմենիա», «Ռուսգոսստրախ Հայաստան», «Ռեսո») ուժեղացման լույսի ներքո մնացած ընկերություններն առայժմ միայն նախապատրաստվում են իրենց դիրքերի ամրապնդմանը:**

**Հետեւաբար շուկայի փորձագետները որոշակի անհանգստություն են արտահայտում այս շուկայի զարգացման նկատմամբ, քանի որ հնարավոր է, որ կոնսոլիդացվի 2-3 ապահովագրողների կողմից: Սակայն «Ինգո Արմենիա» ընկերության ղեկավարը գտնում է, որ ԱՔՊՊԱ հատվածում մենաշնորհները բացառված են, չնայած մրցակցությունը կլինի կոշտ:**

**Ավտոքաղաքացիական պատասխանատվության պարտադիր ապահովագության օրենքը, ամենայն հավանականությամբ, կսկսի գործել 2011 թվականի հունվարի 1-ից:**

# Նրանց հազվադեպ են այցելության գալիս

Երկար միջանցքներն իրար են միացնում Երեւանի թիվ մեկ տուն-ինտերնատի մի քանի մասնաշենքերը: Սենյակները միջանցքի երկարությամբ են՝ կողք կողքի: Այստեղ միայն անհրաժեշտ պարագաներ կան՝ մահճակալ, հեռուստացույց, սեղան: Ծեր բնակիչներն էլ փորձել են զարդարել իրենց սենյակները՝ պատերին փակցնելով սրբերի, հազվադեպ նաեւ՝ հարազատների լուսանկարները:



Նուշիկ Օհանյան եւ Մելինե Պետրոսյան

Երեւանի թիվ մեկ տուն-ինտերնատը 248 բնակիչ ունի: Այստեղ ընդունվում են թոշակային տարիքին անցնելուց հետո: Պետությունն ինտերնատի յուրաքանչյուր բնակչի համար օրական տրամադրում է 2350 դրամ: Այս գումարով ծերանոցի ղեկավարությունն ապահովում է ծերունիների սնունդը եւ կոմունալ ծախսերը: «Մենք կարող ենք մինչեւ 260 մարդու ընդունել: Պատահում է, որ այստեղ լքված ծերունիներ են գալիս, հիմնականում, սակայն, նրանք միայնակ են», ասաց ինտերնատի տնօրեն **Դավիթ Շահբազյանը**:



Թամարա Շահնազարյան

Տուն-ինտերնատը կառուցվել է 1953 թվականին եւ 1979-ից հետո չի վերակառուցվել: Վերջին մի քանի տարիներին ծերանոցի սենյակների մի մասը վերանորոգվել է: «Ինտերնատի 35-40 տոկոսն է միայն վերանորոգված: Նախորդ տարի կաթսայատունը կառուցեցինք, այս տարի, սակայն, վերանորոգման աշխատանքներ պետական եւ բարեգործական միջոցներով նախատեսված չեն», ասաց Դավիթ Շահբազյանը:

Բաղնիքն ինտերնատի բնակիչների համար ընդհանուր է: «Մշտական տաք ջուր ունենք», ասում է ինտերնատի տնտեսուհին:

Գլխաշորը մշտապես կապած 82-ամյա Թամարա Շահնազարյանն արդեն 15 տարի այստեղ է ապրում: Միեւնույն սենյակում բնակվում է բախտակցի հետ: Պատմում է, որ ապրում էին Ղրիմում, պատերազմի տարիներին փախել են, երեխաները մեկնել են Ռուսաստան, ինքն ու ամուսինն էլ հայտնվել են ծերանոցում: «Ամուսինս մահացավ այստեղ: Երեխաներիցս էլ նորություն չունեմ», պատմում է **Թամարա Շահնազարյանը**:

**Նուշիկ Օհանյանն** այստեղ է ամուսնացել: Այժմ երկուսով մի սենյակում են ապրում: Երբ ամուսինը նարդի է խաղում ընկերների հետ, Նուշիկ Օհանյանն էլ իր հարեւանների հետ է զրույցի բռնվում: Թեպետ ավելի հաճախ ու ավելի հաճույքով սենյակի մաքրությամբ է զբաղվում: «Այսօր էլ եմ մաքրել սենյակս: Անկյուններում քլոր եմ ցանել: Սիրում եմ, որ մաքուր է լինում», ասաց Նուշիկ Օհանյանը:

**Մելինե Պետրոսյանն** էլ է այստեղ ամուսնացել: Գոհ է, որ այլեւս միայնակ չէ, սակայն երբեմն ժպտալով նշում է. «Բնավորությունը լավ դուրս չեկավ: Շատ խանդոտ է»: Նրա սենյակը դեռ չեն վերանորոգել, բայց բողոքել չի սիրում: «Միայն ձմեռներն ենք մի քիչ ցրտում», ասում է, փոխարենը, կարծես անհանգստանալով, որ բողոքում է, անմիջապես ավելացնում է. «Չէ, գոհ ենք, ամեն ինչ ունենք այստեղ»:

Ինտերնատի բնակիչներից շուրջ 60-ը լուրջ խնամքի կարիք ունեն: Դավիթ Շահբազյանն ասում է, որ հազվադեպ են երեխաներն ու հարազատներն այցելության գալիս:

Տուն-ինտերնատի կողքին, առանձնացված ցանկապատով, անօթեւանների կացարանն է: Շփումը նրանց միջեւ արգելված չէ, երբեմն նույնիսկ ծերերն ու անօթեւանները բարեկամանում են: «Աշխատում ենք, որպեսզի անօթեւաններին ծերանոցում տեղ չտրամադրենք: Բայց եթե ծերանոցում ազատ տեղեր են լինում, իսկ անօթեւանների կացարանում՝ ոչ, ստիպված ենք լինում երբեմն նրանց այստեղ ժամանակավոր սենյակներ տալ», ասաց Դավիթ Շահբազյանը:

Տուն-ինտերնատի դիմացի փոքրիկ այգում մի քանի տարի առաջ փոքրիկ մատուռ են կառուցել: Ինտերնատի բնակիչներն այստեղ հաճախ են գալիս աղոթելու եւ այգում զբոսնելու:

ԱՐԵՎԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ

АНДРАДАРДZ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

# 2216 բանաձեւի նոր վտանգները

**Երեկ Ազգային ժողովում հրավիրած ասուլիսում ՀՅԴ խմբակցության ղեկավար Վահան Հովհաննիսյանը մի նոր անդրադարձ է արել ԵԽԽՎ 2216 բանաձեւին՝ նկատելով, որ այս բանաձեւում մի շարք դրույթներ, որոնց վրա առանձնապես ուշադրություն չենք դարձրել, վտանգներ ունեն իրենց մեջ: Բանաձեւում խոսվում է այն մասին, որ ԵԱՀԿ Մինսկի խմբում Ֆրանսիայի նախագահությունը թերեւս արժե փոխարինել Եվրոմիության մանդատով, ինչի պարագայում, ըստ Վ. Հովհաննիսյանի, կխախտվի Մինսկի խմբի հավասարակշռության սկզբունքը: Որոշ ժամանակ հետո, քանի որ կիրիլովները ԵԽԽՎ-ում շատ են, մեկ էլ առաջարկ կլինի, որ եթե Եվրոմիության մանդատ է, ինչո՞ւ պետք է միշտ Ֆրանսիան նախագահի, ինչո՞ւ ոչ Մեծ Բրիտանիան, Գերմանիան, Իտալիան կամ Եվրոմիության որեւէ այլ երկիր. այս դեպքում իսկապես կխախտվի Մինսկի խմբում հաստատված հավասարակշռությունը: Փաստորեն երեկ Վ. Հովհաննիսյանն իր ասուլիսով զգուշացնում էր Հայաստանի ԱԳՆ-ին եւ երկրի նախագահին՝ անհապաղ ջանքեր գործադրել՝ թույլ չտալու, որ Մինսկի խմբում Ֆրանսիայի մանդատը փոխարինվի Եվրոմիության մանդատով: Քանզի չի բացառվում, որ այս գաղափարն առաջ տանողները վաղն էլ մտածեն, թե ռուսական մանդատը կարող է ռոտացիայի ենթարկվել ու Ռուսաստանի փոխարեն համանախագահ կարելի է տեսնել ԱՊՀ որեւէ երկրի: Մեր դիվանագետները պետք է ջանք գործադրեն այդպիսի զարգացումները կանխարգելելու:**

**Բանաձեւում մի ուրիշ վտանգ պարունակում է Սեւծովյան միություն ստեղծելու առաջարկը, որտեղ տոն տվողը Ռուսաստանն ու Թուրքիան կարող են լինել: Բանախոսը հիշեցնում է, թե ռուս-թուրքական մերձեցումը հայերի համար ի՞նչ է նշանակել, եզրակացնելով, որ եթե այդպիսի միություն ստեղծվի՝ Հայաստանը չպետք է մասնակցի: Ըստ նրա՝ Եվրոմիության այդպիսի առաջարկի տակ թաքնված է Թուրքիային շեղելու խնդիրը, որ այս երկիրը այդ միությունում աշխատելով բավարարվի՝ չթակելով այլեւս Եվրոմիության դռները:**

Մ. Խ.

# Թուրքագետի կարծիքով՝ թուրք-իսրայելական կոնֆլիկտն արագ կհարթվի

**Թուրքագետ, ԵՊՀ արեւելագիտության ֆակուլտետի փոխդեկան Ռուբեն Մելքոնյանը երեկ ենթադրել է, որ թուրք-իսրայելական կոնֆլիկտն արագ կհարթվի եւ երկու երկրների համագործակցության վրա հազիվ թե խորքային ազդեցություն ունենա: Այս իմաստով՝ հայ հանրությունը չպետք է պատրանքներ ունենա, թե թուրք-իսրայելական պառակտումից ինչ-որ շահ կարող է մեզ համար լինել, թուրք իսրայելական համագործակցությունը միշտ գերակա է Իսրայելի համար՝ հայ-իսրայելական շահերի համեմատ: Հայոց ցեղասպանության բանաձեւի քննարկումները, ըստ թուրքագետի, մշտապես քաղաքական առեւտրի գործիք են եղել Իսրայելի համար: Եթե անգամ Հայաստանը ինչ-որ բան շահի, դա մակերեսային մի բան է լինելու, ասենք՝ հրեական լոբբին Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման խնդրում ավելի չեզոք դիրք կընդունի, կամ Իսրայելի խորհրդարանում՝ Քնեսեթում գուցե ակտիվանա Հայոց ցեղասպանության բանաձեւի քննարկումը: Այդքանը միայն:**

# Հայերենը՝ Ուկրաինայի 16 շրջանային լեզուների թվում

**Ուկրաինայի «Տարածաշրջանների կուսակցությունը» նախապատրաստել է «Ուկրաինայի լեզուների վերաբերյալ» օրինագիծ, որտեղ նշվել են այն 16 լեզուները, որոնք պետք է համարվեն «շրջանային նշանակություն ունեցող»: Այս լեզուների թվում է նաեւ հայերենը: Այժմ օրինագիծն ուղարկվել է Ուկրաինայի Գերագույն ռադա՝ վերջնականապես ընդունվելու համար:**

**«Շրջանային լեզվի» կարգավիճակը հնարավորություն է տալիս տվյալ լեզվով խոսելու շրջանային խորհուրդներում, սա հնարավոր է, եթե տվյալ շրջանում այդ լեզվով խոսողները կազմում են ընդհանուր ազգաբնակչության 10 տոկոսը: Իսկ եթե 10-ից քիչ են տվյալ լեզուն օգտագործողները, ապա շրջանային խորհուրդն ինքը պետք է որոշի՝ «խոսել» այդ լեզվով, թե ոչ:**

# Միայնակ թոշակառուին ոստիկանությունը չի պաշտպանում



Միայնակ թոշակառու, աշխատանքային երկրորդ խմբի հաշմանդամ **Վեներա Անտոնյանն** այս տարվա փետրվարին դիմել է Հայաստանի գլխավոր դատախազին:

Անտոնյանը, բնակվելով Ազատության պողոտա 2/ա շենքի 14 բնակարանում, տարիներ շարունակ բողոքում է, որ կից թիվ 13 բնակարանում ապրող ընտանիքի անդամները տարբերաբար գողություն են կատարում իր բնակարանից, նրա հաշվումներով՝ տարբեր տարիներին իր բնակարանից շուրջ 5 մլն դրամի իրեր են գողացվել: Այդ ընտանիքի անդամներից մեկը 2007 թվականին ոչ միայն գողություն է կատարել, այլեւ պոկել է Վեներայի բնակարանի ջրաչափին միացրած խողովակը եւ փակիչը բաց թողել, որի հետեւանքով ջուրը հեղեղել է բնակարանը, լցվել ներքեւի հարկի բնակարան, բնականաբար՝ ներքեւի հարկի բնակիչը պահանջում է նորոգել իր բնակարանը: 2008-ի նոյեմբերի 5-ին եւս Վեներայի հարեւան նույն ընտանիքի մյուս անդամ Ստյոպան մուտք է գործել Վեներայի բնակարան, բայց տեսնելով տանտիրուհուն՝ ընդամենն անցնում է խոհանոցից զուգարան եւ պոկում ջրաչափի պլոմբը: 2009 թվականի հունվարի 12-ին Վեներան դիմում է Քանաքեռ-Զեյթունի ոստիկանություն, հունվարի 22-ին ծանուցագիր ստանում ոստիկանությունից, որ դիմումն ընթացքի մեջ է, հենց նույն օրն էլ նա իր պատուհանից տեսնում է, որ այդ ընտանիքի մի ուրիշ անդամ՝ Լեւոնը, իր բնակարանից գողացած իրերը տեղափոխում է ավտոմեքենա: Փոխանակ ոստիկանությունը հայտնաբերի գողացված իրերը, գողերին ջրի երես դուրս բերի, ապրիլի 6-ին զանգահարում է քննիչ Ա. Ղալեչյանն ու առաջարկում Վեներա Անտոնյանին՝ դատահոգեբուժական փորձաքննություն անցնել, քանի որ դա պահանջում է հենց այն հարեւանը, ում Վեներան մեղադրում է իր բնակարանից պարբերաբար գողություն իրականացնելու մեջ: Ինչպես նկատեցիք՝ իսկական տրագիֆարս: Մի խոսքով՝ թոշակառու կնոջը ստիպել են անցնել այդ զննությունը, եւ 2009 թվականի մայիսի 5-ին ոստիկանությունից Վեներան մի որոշում է ստանում, որ ինքը տառապում է «ծերունական փսիխոզ» հոգեկան հիվանդությամբ: Ահա այսպես: Մարդու տունը պարբերաբար թալանում են, մենակ կնոջը սպառնում ու նեղացնում, ու մեր հերոսական ոստիկանությունը փոխանակ նրան պաշտպանի, դեռ «գժի թուղթ» է դեմ տալիս, գուցե դրա համար իր խիստ «օբյեկտիվ» պատճառներն ունենալով, չգիտենք: Անգամ ոստիկանները խորհուրդ են տվել Վեներա Անտոնյանին՝ բողոքելը դադարեցնել: Մեր ձեռքի տակ է ոստիկանության Երեւան քաղաքի վարչության Քանաքեռ-Զեյթուն բաժնի՝ 2009 թվականի մայիսի 8-ով թվագրված պատասխանը, որով հայտնվում է որ Վեներայի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է հանցադեպի բացակայության պատճառով: Մերժման մանրամասներն ասում են, որ Վեներայի դռների փականները սարքին են, օտար մարմնի հետքեր չկան (կարծես թե գողի համար խնդիր կա բանալի ունենալու ու հանգիստ, առանց վնասելու բանալիով դուռը բացելու), Վեներան էլ շրջապատում բնութագրվում է որպես կասկածամիտ եւ «տարօրինակ» (բառը ոստիկանության պատասխանից մեջբերել ենք իր նախաստեղծ տեսքով) անձնավորություն, դեռ Վեներան էլ հաղորդում տալու պահին եւ ներկայումս տառապում է «ծերունական փսիխոզ» հիվանդությամբ: Այս վերջինի առումով նշենք, որ տողերիս հեղինակը մոտ 5 ժամ զրուցել է Վեներա Անտոնյանի հետ՝ շատ սթափ, ամեն ինչից տեղյակ եւ «փսիխոզի» որեւէ նշանի հետքն անգամ չկրող անձնավորություն է. այս բոլորը «Թռիչք կկվի բնի վրայով» ֆիլմի իրավիճակին է նմանվում, եթե որեւէ իրավասու մարմին չմիջամտի, իսկ ոստիկանների ուժը շարունակի պատել միայն թոշակառու կնոջ վրա:

Բնականաբար՝ Վեներա Անտոնյանը շարունակում է իր բողոքը, քանի որ հարեւանը շարունակում է անհեթեթ պահվածքը, սպառնալիքներ տեղում եւ այլն: Անտոնյանն այժմ էլ դիմել է Հայաստանի գլխավոր դատախազին, ինչպես նյութի սկզբում ասացինք՝ այս տարվա փետրվարին, եւ արդեն երեք ամիս սպասում է, որ իրեն պատասխանեն: Նա հուսով է, որ գործի քննություն կվերսկսվի եւ սեփականության հանդեպ ոտնձգություն անողները կպատժվեն, սակայն եթե գլխավոր դատախազը նույն Քանաքեռ-Զեյթունի ոստիկանություն է ուղարկում բողոքը՝ գործը քննելու, շրջանը փակվում է, ոստիկանության այս բաժանմունքում իրենք իրենց արածին դեմ նոր որոշում հազիվ թե կայացնեն: Լավ, այս երկրում ո՞վ է պաշտպանելու միայնակ թոշակառուին, եւ մեր հարկերով ո՞ւմ է պաշտպանում ոստիկանությունը: **«Ազգը»,** մանրամասնորեն զրուցելով Վեներա Անտոնյանի հետ, զննելով նրա բողոքն ու ոստիկանության՝ նրա հաղորդումը մերժելու հիմնավորման մանրամասները, համոզված է, որ ոստիկանությունում պարզապես այս տեսակ «հարեւանական» խճճված գործերով զբաղվելու գլուխ չեն դրել կամ գուցե այլ պատճա՞ռ ունեն «գործը ջրելու». սակայն այստեղ սովորական վեճի մասին չէ խոսքը, այլ՝ բնակարանային գողության: «Ազգը» հանձն է առնում հետեւել այս գործին, ով-ով, բայց հարգարժան տարիքի կնոջը եթե ոստիկանությունը հանձն չառնի պաշտպանել, ապա գործը մնում է լրագրողներիս:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

AZG NEW PDF.qxd 01/06/2010 21:58 Page 1



# Հայրենի հողում բնաջնջված ժողովրդի երբեմնի գոյությունը պահպանվում է տեղանուններում

## *Ուստի հայկական տեղանունների թուրքացումը իրագործված ցեղասպանությունը շարունակելու դրսեւորում է*

1914-ի տվյալներով, ինչպես «Թարաֆ» թերթում առանց աղբյուր նշելու գրել է թուրք պատմաբան Այշե Հյուրը, ներկայիս Թուրքիայի տարածքում գործել են 2538 հայկական եկեղեցի, 451 հայապատկան վանք եւ 2000 դպրոց: 1915-ին, ձեռնամուխ լինելով հայերի բնաջնջմանը օսմանյան Թուրքիայում, թուրք, քուրդ, չերքեզ ջարդարարները սկսեցին եկեղեցիների, վանքերի եւ դպրոցների կողոպուտը: Դրանց մի մասը հայ զոհերին ներսում ողջակեզ անելու պատճառով հրկիզվեց: Դրան աստիճանաբար հետեւեցին բազմության տարերային ավերումն ու պետականորեն քանդումը:

Մինչդեռ քեմալականների ժամանակակից Թուրքիան Լոզանի պայմանագրի 42-րդ հոդվածով պարտավորվել էր պահպանել ազգային փոքրամասնություններին պատկանող եկեղեցիները, վանքերը, գերեզմանները ու դպրոցները: Չնայած Լոզանի պայմանագրով ստանձնած պարտավորություններին, ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1974 թ. զեկուցագրի համաձայն, այդ ժամանակ Թուրքիայի տարածքում ընդամենը 931 եկեղեցի եւ վանք էր մնացել: 1974-ից հետո այս եկեղեցիներից ու վանքերից 464-ը հիմնահատակ քանդվեց, իսկ 252-ը անտերության մատնվեց, որ քանդվի:

1915-23 թթ. իթթիհադականների հետ հայերի բնաջնջումն իրականացնելուց հետո, քեմալականները սկսեցին նախ ժխտել ցեղասպանության փաստը, ապա ձեռնամուխ եղան հայկական հետքը ջնջելու Թուրքիայի Հանրապետության տարածքում: Ժխտողականությունը ցեղասպանությամբ արդարացումն է: Իսկ բնաջնջմանը ենթարկված ժողովրդի եկեղեցիների, վանքերի, գերեզմանների քանդումը, որպեսզի երկրում վերանա նրա հետքն անգամ, իրագործված ցեղասպանությունը շարունակելու դրսեւորում:

Հայրենի հողում բնաջնջված ժողովրդի երբեմնի գոյությունը հաճախ տեղանուններում է պահպանվում: Դրանք այդ գոյության աղաղակող վկաներն են եւ հայկական հետքի յուրօրինակ վկայականները: Ակնհայտ է, որ երկրում հայկական հետքի վերացման թուրքական տրամաբանությունը պիտի հանգեցներ Թուրքիայի ողջ տարածքում, հատկապես Արեւմտահայաստանում տեղանունների թուրքացման տրամադրություններին: Հայերի պատմական հայրենիքում հայկական տեղանունների թուրքացումն էլ ցեղասպանության մեկ այլ դրսեւորում է:




«**Տեղանունների թուրքացումը Օսմանյան կայսրությունում եւ հանրապետական Թուրքիայում**» աշխատության մեջ հենց այդ խնդրին է անդրադարձել ԵՊՀ արեւելագիտության ֆակուլտետի թուրքագիտության ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու **Լուսինե Սահակյանը**: Համառոտ, բայց բովանդակալից այս աշխատությունը «Արարատ» ռազմավարագիտական եւ ԵՊՀ օսմանագիտական կենտրոնների երաշխավորմամբ հրատարակվել է Մոնրեալում: Ծավալը 70 էջ է: Հագեցված է 1803-04 եւ 1867 թթ. օսմանյան երկու քարտեզներով, որոնցում հայկական լեռնաշխարհը ներկայացված է «Բիլադ-ուլ-Արման», այսինքն՝ Հայաստան երկիր:

Դոց. Սահակյանի աշխատությունը եռալեզու է, որը հավասարապես ներկայացված է անգլերեն, հայերեն եւ ռուսերեն: Հեղինակը հետահայաց անդրադառնում է Հայկական լեռնաշխարհում տեղանունների յուրացման պատմությանն ու ձեւերին, ցույց է տալիս, թե թուրքական ցեղերը, ապա եւ օսմանյան իշխանությունները նորանվաճ տարածքները իրացնելու նպատակով բնիկ տեղանունը ինչպես էին թարգմանում թուրքերեն կամ նույնացնում թուրքերենին: Նա հայկական տեղանունների յուրացման ձեւ է համարում թուրքերենով դրանք ստուգաբանելու, ինչպես նաեւ դրանց թուրքական կամ քրդական ծագում վերագրելու փորձերը:

Այս փորձերը սկսվել են դեռեւս սուլթան Համիդի օրոք, իսկ երիտթուրքերը 1913-ի մայիսի 13-ի «Գաղթականների բնակեցման կանոնադրությամբ», ապա եւ Էնվեր փաշայի 5 հունվարի 1916 թվակիր հրամանագրով, պետական քաղաքականության մակարդակի են բարձրացրել տեղանունների թուրքացումը: Այդ քաղաքականությունը հետեւողականորեն շարունակել են քեմալականները, անվանելով դեռեւս 1923-ին «Արեւելյան Անատոլիա» Արեւմտյան Հայաստանը:

1925-ին ամբողջությամբ փոխվում են Արդվինի բոլոր բնակավայրերի անունները, սկսած 1930-ից մասնակի անվանափոխության են ենթարկվում հայկական մնացած տեղանունները: Սակայն արմատական փոփոխությունները կատարվում են 1949 թվակիր նահանգային վարչական օրենքի հիման վրա, 1957-ին «Անվանափոխության մասնագիտական հանձնաժողովի» ստեղծումով: 1957-78 թթ. այս հանձնաժողովը ուսումնասիրում է շուրջ 75 հազար տեղանուն, անվանափոխության է ենթարկում 28 հազար բնակավայրերը, որոնցից 12 հազարը գյուղ են:

«Տեղանունների թուրքացումը Օսմանյան կայսրությունում եւ հանրապետական Թուրքիայում» աշխատության մեջ Լուսինե Սահակյանը նահանգ առ նահանգ ներկայացնում է անվանափոխված գյուղերն ու գավառները եւ ցույց է տալիս, որ տեղանունների նենգափոխումը եղել ու մնում է Թուրքիայի բոլոր ժամանակների իշխանությունների ժողովրդագրական քաղաքականության կարեւոր բաղադրիչը:

**ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ**
**Պատմական գիտությունների թեկնածու**

# Միսաք Քելեշյանի բացահայտումները թուրքացած հայ որբերի վերաբերյալ

***«Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի ապրիլքսանչորսյան բացառիկ համարից ստորեւ թարգմանաբար ներկայացնում ենք վերոնշյալ վերնագրով Նորա Բարսեղյանի հոդվածը:***

**Հայոց ցեղասպանության անմիջական հետեւանքով մահացան ավելի քան մեկ միլիոն հայեր, որոնք կամ սպանվեցին, կամ դաժան տանջանքների ենթարկվեցին, կամ էլ ստիպված եղան տարագրվել դեպի անապատները, այսինքն՝ դեպի ստույգ մահ: Միայն բախտավորներին հաջողվեց հասնել Սիրիա կամ Սիրիայի ֆրանսիական մանդատը, որը հետագայում դարձավ Լիբանան:**

**Տեղահանվածներից ոմանք հասան Կիլիկիա, սկսելու, իրենց կարծիքով, նոր կյանք: Սակայն Բեյրութից ոչ հեռու գտնվող Այնտուրա փոքրիկ գյուղում հայ որբերին թուրքացնելու մի նոր ծրագիր էր սկսել գործել: Հայոց ցեղասպանությանն առնչվող լուսանկարների անխոնջ հավաքորդ Միսաք Քելեշյանը վերջերս հայտնաբերել է դավանափոխ անելու այդ «կառույցը»: Մի քանի ամիս առաջ կարդում էի Բեյրութի ամերիկյան համալսարանի պրեզիդենտ Ստենլի Քերի «Մարաշի առյուծները» գիրքը, որտեղ նկարագրված են հեղինակի անձնական փորձառությունները Նիըր Իսթ Ռիլիֆ (Մերձավոր Արեւելքի օժանդակության) կազմակերպության հետ 1919-22 թվերին: Գրքում հանկարծ մի ցնցող լուսանկար գրավեց ուշադրությունս հետեւյալ մակագրությամբ. «Ջեմալ փաշան Այնտուրայի (Լիբանան) ֆրանսիական քոլեջի աստիճանների վրա: Ջեմալ փաշան այդ քոլեջի շենքում հայ երեխաների համար որբանոց էր բացել, որի տնօրեն էր նշանակել Հալիդե Էդիպին»,[1] գրում է Քելեշյանը եւ շարունակում. «2005 թվի դեկտեմբերի 8-ին ես այցելեցի այդ Այնտուրա կոչված ավանը եւ գտա լուսանկարում պատկերված ֆրանսիական քոլեջը: Պարզվեց՝ հայտնի քոլեջ է, հիմնված ճիզվիթ (1657-1783) եւ Լազարյան (Սբ Ղազարի) միաբանության (1783-1834 թթ.) հոգեւորականների կողմից: Հանդիպեցի քոլեջի տնօրենին՝ հայր Ժան Աֆեյրին եւ լուսանկարը նրան ցույց տալուց հետո խնդրեցի թույլ տալ քոլեջի արխիվներում հավելյալ տեղեկություններ որոնել եւ բացահայտել ամբողջ պատմությունը: Լուսանկարը նրան էլ զարմացրեց, եւ նա արխիվի աշխատակցին խնդրեց օգնել ինձ:**

**Ժան Սեբաստիան Արհանը ֆրանսիացի էր, Լիբանան էր եկել 43 տարի առաջ եւ ժամանման օրվանից աշխատել էր քոլեջի արխիվում: Նպատակս բացատրելուց հետո զարմացա, որ նա ոչ միայն քաջատեղյակ էր քոլեջի այդ շրջանի պատմությանը, այլեւ այդ շրջանին վերաբերյալ բոլոր նյութերը առանձնացրել էր հատուկ մի թղթապանակում, որն էլ հանձնեց ինձ»:**

**Ըստ Քելեշյանի, լուսանկարի ամենակարեւոր բացահայտումը Ջեմալ փաշայի եւ Հալիդե խանումի ներկայությունն է հայ որբերի կողքին: Հալիդե խանումը (Հալիդե Էդիպ Ադիվար, 1884-1964) եղել է Թուրքիայում իր ժամանակի ֆեմինիստական շարժման հայտնի ակտիվիստ: Հաճախել է (1901-ին) կանանց ամերիկյան քոլեջը եւ ճանաչված է եղել որպես վիպագիր: Նրա գրքերում քննադատության է ենթարկվել կանանց ցածր սոցիալական վիճակը Թուրքիայում: Հատկանշական է նրա առաջին՝ «Սեւիյե Թալիփ» վեպը՝ հրատարակված 1909-ին: Հալիդեի առաջին ամուսինը եղել է Սալիհ Զեքին: Հետո նա ամուսնացել է դոկտ. Ադնան Ադիվարի հետ (1917 թ.): Ծառայել է Թուրքիայի ազգայնական զինվորականության շարքերում որպես սերժանտ: Ապրել է Մեծ Բրիտանիայում եւ Ֆրանսիայում: Հանդիպել է Գանդիին, իսկ Մ. Նահանգներում իր շրջագայության ժամանակ՝ ամերիկացի հայտնի ֆեմինիստների հետ: Սիրահարված է եղել Քեմալ Աթաթուրքին, բայց վերջինս նրան մերժել է: Հալիդեն աջակցել է այն փաշաներին, ովքեր ծրագրել, կազմակերպել եւ իրականացրել են հայերի ցեղասպանությունը, իսկ հետագայում կարեւոր դեր է խաղացել ողջ մնացած որբերին թուրքացնելու գործում՝ Նիգար խանումի ընկերակցությամբ: 1950-54 թվերին եղել է թուրքական խորհրդարանի անդամ: Օսմանյան կայսրությունը 1914-ի հոկտեմբերի 29-ին պատերազմ էր հայտարարել Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի եւ Ռուսաստանի դեմ՝ դրանով իսկ անվավեր հռչակելով մեծ տերությունների հետ 1861-ին (հունիսի 9-ին) կնքված այն պայմանագիրը, որով հատուկ կարգավիճակ էր շնորհվում Լեռնալիբանանի (Ջաբալ Լուբնան) տարածքին (6500 կմ² տարածություն, 930 բնակավայր, շուրջ 400 հազար բնակչություն եւ Ջունիի շրջանում դեպի ծով մի նեղ ելք): Լիբանանի վերջին քրիստոնյա կառավարիչ Հովհաննես փաշա Գույումջյանին (1913-15) փոխարինելու էր եկել Ալի Մունիֆ բեյը, որի իշխանության օրոք տարածաշրջանը մատնվեց սովի, ահաբեկչությունների եւ քաղաքական բռնությունների:**

**«1915 թվականի վերջերին Ջունիի կայմակամը (շրջանային կառավարիչը) Այնտուրայի քոլեջի պատասխանատուներին հայտնում է, որ դպրոցը պետք է փակվի: Հոգեւորականներին ստիպում են այլ վանքեր տեղափոխվել»: Ոմանք գնում են Անատոլիա եւ Ուրֆա, իսկ մի քանի ծեր եւ ճանապարհորդելու ի վիճակի չեղողներ մնում են Այնտուրայում: Լազարյանների հեռանալուց հետո քոլեջը վերածվում է որբանոցի հայ, թուրք եւ քուրդ երեխաների համար: 1915-ին այնտեղ ապաստան են գտել 800 որբեր: Երեսուն զինվորականներ հսկել են կառույցը: 10 հոգուց կազմված անձնակազմը՝ տնօրեն Նեբիհ բեյի գլխավորությամբ սկսել է հայ երեխաներին թուրքացնելու գործընթացը: Տղաներին թլփատել են, մահմեդականացրել եւ արաբական կամ թուրքական անուններ տվել նրանց՝ պահպանելով նախնական անունների սկզբնատառերը»:**

**Թուրքական չորրորդ բանակի հրամանատար Ջեմալ փաշան 1916-ին այցելել է որբանոցը: Իմանալով այցի մասին, Նեբիհ բեյը կարգադրել է Սբ Հովսեփի եւ Հայր Սալիեժեի արձանները հանել շենքի մուտքամասից: Ջեմալ փաշան ժամանել է Հալիդե Ադիվարի հետ եւ հայտարարել, որ վերջինս տնօրենի պաշտոնում փոխարինելու է Նեբիհ բեյին: Հալիդեն նաեւ պատասխանատու է նշանակվել Բեյրութի «Քույր Նազարեթ» դպրոցի, որը փակվել է 1917-ին: Ջեմալ փաշայի հետ 3-15 տարեկան 400 նոր որբեր են եկել Այնտուրա: Նրանց ուղեկցել են թուրք ազնվական ընտանիքներից 15 երիտասարդ կանայք, որոնք միացել են աշխատակազմին՝ ձուլման ենթարկելու հայ որբերին:**

**Մինչ Բեյրութի եւ Լիբանանի այլ մասերում սովը համատարած բնույթ էր կրում, ալյուրը, կովերն ու ոչխարները առատ էին Այնտուրայում: Նպատակը առողջ ու լավ սնված նոր՝ «թուրքացած» երեխաներ ունենալն էր:**

**Որբանոցում ուսուցումը թուրքերենով է կատարվել: Մեծերին սովորեցրել են արհեստներ՝ ատաղձագործություն, կոշկակարություն եւ այլն: Մոլլան հինգ անգամ օրական աղոթքի է հրավիրել երեխաներին, իսկ երեկոյան նվագախումբը «Երկար ապրի Ջեմալ փաշան» է նվագել:**

**1916-ի ամռանը, մինչ օսմանյան բանակը կորուստներ էր կրում Պաղեստինում եւ Բալկանյան պատերազմում, բորոտություն է տարածվել որբանոցում, որի հետեւանքով Հալիդե Ադիվարը, Լութֆի բեյն ու Ռաշիդ բեյը լքել են դպրոցը: Որբանոցում սկիզբ են առել քաղցն ու երեխաների միջեւ արյունալի կռիվները: Այդ ժամանակ որբանոցի 1200 երեխաներից հազարը հայեր էին, մնացածը՝ թուրքեր եւ քրդեր: Հայ երեխաները պատառաքաղներ եւ այլ սուր իրեր են պահել իրենց մոտ՝ պաշտպանվելու համար: Երբ օսմանցիները նահանջել են, եւ բրիտանացիներն ու ֆրանսիացիներն են եկել հոգեւորականների հետ, դպրոցում քաոսային վիճակ են հայտնաբերել: Լազարյան միաբանության անդամներից մեկը Բեյրութի ամերիկյան համալսարանից օժանդակություն է խնդրել: Բայարդ Դոջ անունով մի աշխատակից Ամերիկյան կարմիր խաչի միջոցով անմիջապես սնունդ է ուղարկել որբանոց:**

**1918-ի հոկտեմբերի 1-ին թուրքական բանակը հեռացել է Լիբանանից: Հոկտեմբերի 7-ին հայր Սարլուն վերադարձել է Այնտուրա եւ իրավիճակը քննելով կարգադրել է թուրք եւ քուրդ որբերին տեղափոխել Դամասկոս: Այնուհետեւ հայ որբերին հավաքելով սկսել է բացատրել, որ իրենց թուրքացման գործընթացն ավարտված է, եւ այսուհետեւ նրանք պետք է փորձեն վերականգնել իրենց հայկական անունները: Սուրբ Հովսեփի արձանը վերականգնվել է իր տեղում, եւ ֆրանսիական դրոշն է սկսել ծածանվել: Բայց հայր Սարլուն գիտակցել է, որ իր հնարավորությունները սահմանափակ են, եւ դիմել է Բայարդ Դոջին ու Ամերիկյան կարմիր խաչին՝ օժանդակելու դպրոցին:**

**Տնօրեն է նշանակվել պարոն Քրոուֆորդը: Հայ դասատուներ աշխատանքի են նշանակվել, ուսուցումը կատարվել է հայերենով եւ անգլերենով: Հետագայում «Նիըր իսթ Ռիլիֆն» է ստանձնել որբանոցի խնամակալությունը, մինչեւ 1919-ի աշունը, երբ արական սեռի 470 որբերին ուղարկել են Հալեպ, իսկ իգական սեռի 200 որբերին՝ Լիբանանի Ղազիր ավանում գտնվող Հայկական որբանոցը:**

**Թուրքերի իշխանության տակ գտնվելու ժամանակահատվածում 300 հայ որբեր են մահացել տիֆից եւ սանիտարական վատ պայմաններից: Նրանց թաղել են (1916-ին) դպրոցի բակում: Երբ 1993-ին դպրոցի նոր ղեկավարությունը որոշել է նոր մասնաշենք կառուցել այդ բակում, շինարարները հողը փորելիս հայտնաբերել են մարդկային մարմնի մասունքներ, որոնք միասնաբար տեղափոխվել եւ վերաթաղվել են Այնտուրայում հոգեւորականների համար նախատեսված գերեզմանատանը:**

**Միսաք Քելեշյանը, որ Անգլիայում է ստացել իր ինժեներ-էլեկտրիկի մասնագիտությունը եւ 11 տարի է, ինչ ապրում եւ աշխատում է Ուոթերթաունում, ներկայումս «Սիլիկոն վելի գրուպի» ներկայացուցիչն է Մերձավոր Արեւելքում: Նա ՌԱԿ եւ Թեքեյան մշակութային միության Լիբանանի մասնաճյուղի անդամ է: Կինը Մայդան (Քելեշյան) եղել է Մ. Նահանգների եւ Կանադայի ԹՄՄ-ի գործադիր քարտուղարը:**

**Շրջելով որբանոցում՝ Միսաքը շատ ծանոթ մի անկյուն է նկատել: Հետագայում տանը իր լուսանկարների մեջ հայտնաբերել է այդ նույն անկյունը, որտեղ մի հայ որբ է նկարված եղել: Հիշել է, որ լուսանկարի բնօրինակը գտնվում է Անթիլիասի կաթողիկոսարանում՝ Մարիա Յակոբսենի (1882-1960) փաստաթղթերի հատուկ թղթապանակում: «Հիմա առավել մեծ նշանակություն ունի այդ լուսանկարը ինձ համար», եզրափակում է նա իր հուշերը: «Առեղծվածի մի մասնիկ եւս բացահայտված է՝ թուրքականացումը որբերի, որը շարունակությունն էր մեր ժողովրդին պատուհասած աննկարագրելի ողբերգության»:**

**Թարգմ. Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ**

*(1) Այս մասին գրել է նաեւ անգլիական «Ինդիփենդենտ» թերթի ճանաչված լրագրող Ռոբերտ Ֆիսքը իր «Հայերի ցեղասպանության կենդանի ապացույցը» հոդվածում, որը թարգմանաբար լույս է տեսել «Ազգի» մարտի 19-ի համարում: Նաեւ «Ցեղասպանության որբերը» վերնագրով 18 րոպեանոց վավերագրական ֆիլմ (ռեժիսոր՝ Պարետ Մարոնյան) է ցուցադրվել «Հոլիվուդ Ֆլորիդայում» Մեծ եղեռնի 95-րդ տարելիցի միջոցառումների շրջանակներում: Այս մասին **«Ազգը»** գրել է 2010-ի մայիսի 11-ի համարում:*

# Առնոլդ Ստեփանյան. «Մենք հոտ չենք ու հովիվ էլ չունենք»

## *Թբիլիսիի քաղաքային խորհրդի ընտրություններում հայ թեկնածուի բացակայությունն արհամարհանք է համայնքի հանդեպ*

***Թբիլիսիի հայերի ասամբլեան բավականին երկար պասիվ դիրք բռնած թիֆլիսահայ համայնքի եզակի նախաձեռնություններից է, որ կարծես թափ ստանալու եւ գործունեություն ծավալելու նշաններ է ցույց տալիս: Առնոլդ Ստեփանյանն այդ ասամբլեայի համակարգողներից մեկն է, որ նաեւ ակտիվ գործունեություն է ծավալում որպես «Բազմազգ Վրաստան» հասարակական շարժման ղեկավար: Ներկայացնում ենք Առնոլդ Ստեփանյանի հետ «Ազգի» հարցազրույցը, որ տեղի է ունեցել Վրաստանում մայիսի 30-ի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների նախօրեին:***



**- Վերջերս հաճախակի են ստացվում հաղորդագրություններ Թբիլիսիի հայերի ասամբլեայի անունից, սակայն տեղեկություններ, թե ինչպիսի կազմակերպություններ, ում է ներկայացնում եւ ինչով է զբաղվում, առանձնակի չեն պատահում: Կարո՞ղ եք ներկայացնել հակիրճ, թե ինչպես է ստեղծվել այս շարժումը եւ ինչ նպատակներ ունի:**

- Սա մարդկանց ոչ ֆորմալ շարժում է, որ նոր միայն ուրվագծվում է: Սա հայերի շարժում է, որի անդամները կարծիքների առաջնորդներ են՝ opinion leaders, տարբեր մասնագիտությունների: Այս շարժման էությունը չի ենթադրում նախկինի փորձը, երբ միավորվում էին հասարակության սերուցքը կամ իշխանության հետ առնչություն ունեցողները: Միակ սկզբունքը մեզ համար այն մարդկանց միավորումն է, ում կարծիքին մարդիկ հետեւում են: Արդեն իսկ մոտ 60 այդպիսի մարդկանց է միավորում մեր շարժումը, մարդիկ, որոնք ակտիվորեն զբաղվել եւ զվաղվում են այսպես կոչված հայկական թեմայով Թբիլիսիում: Մենք հատուկ չենք գրանցում մեր կազմակերպությունը, որպեսզի չդառնանք արդեն իսկ գրանցված ՀԿ-ներից հերթականը: Ասամբլեայի հասկացությունը ավելի լայն է, դա անհատների հետ մեկտեղ արդեն իսկ միավորում է մի քանի հայկական կազմակերպություններ՝ «Նոր սերունդ», Վրաստանի վետերանների միություն, Թբիլիսիի հայերի պաշտպանության կենտրոն եւ այլն: Ասամբլեայի հիմնական ծանրաբեռնվածությունը հայ բնակչության շահերի լոբբինգն է: Շարժումը նոր է, բայց արդեն կարելի է խոսել ցուցանիշների, կառույցի կշռի մասին, քանի որ ասամբլեայի հայտարարություններն ու գործունեությունն անուշադրության չեն մատնվում: Սեպտեմբերից, ամենայն հավանականությամբ, ասամբլեան կդառնա ֆորմալ կառույց՝ նորացված ու կազմակերպված այնպես, որ Թբիլիսիի հայ համայնքն այդուհետեւ կգործի ավելի գրագետ:

**- Ասամբլեան արդեն իսկ ակտիվորեն ներգրավվել է Վրաստանի տեղական ինքնակառավարման ընտրություններում՝ հայ համայնքի շահերը հետապնդելու մտադրությամբ: Ի՞նչ կասեք այս առնչությամբ:**

- Հայկական ասամբլեան բավականին ակտիվ է իրեն պահել, խորհրդակցություններ են իրականացվել «Ալյանս Վրաստանի համար» դաշինքի հետ՝ Դավիթ Գամկրելիձեի, Իրակլի Ալասանիայի, Դավիթ Ուսուպաշվիլու եւ Սոզար Սուբարիի եւ աննախադեպ է, երբ բոլոր առաջնորդները գալիս են որեւէ համայնքի հետ հանդիպմանը: Գիգի Ուգուլավան արհամարհեց ու չեկավ հանդիպման: Նույն կերպ վարվեցին նաեւ Քրիստոնեա-դեմոկրատները, թեեւ սկզբում հետաքրքրություն կար էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ: Հիմնական այս ուժերն էին: Ցավոք, դա չազդեց հայերի մասնակցության վրա կուսակցական ցուցակներում ընդգրկվելու ճանապարհով: Կարծում եմ, որ տեղի ունեցածի մեր մեղավորությունը եւ այդ կուսակցությունների մեծ սխալն այն է, որ չօգտագործվեցին հիմնական ռեսուրսները, իսկ կուսակցություններն էլ հավատ չունեն, որ հայերը զանգվածաբար կքվեարկեն որեւէ մեկի օգտին, բացի իշխանությունից: Թերեւս մենք չենք կարողացել հավաստել, որ մենք մեզ չենք պահի հոտի նման, որ գնում է հովվի հետեւից: Մենք հոտ չենք ու հովիվ էլ չունենք:

**- Բացի այն, որ հայերի քվեարկության տվյալները գրեթե միշտ ներկայացվում են որպես զանգվածաբար քվեարկություն իշխանության օգտին, Թբիլիսիում կարծես ավանդույթ կա՝ հաշվի չառնելու հայ համայնքի շահերը: Արդյոք չե՞ք կարծում, որ այդօրինակ ավանդույթը եւս իր դերակատարությունն ունի, որ Թբիլիսիի քաղաքային խորհրդում հայ չի լինելու:**

- Բացի վատ ավանդույթից, այս անգամ որեւէ մեկի ցուցակում հայ թեկնածուի բացակայությունը ապտակ է հայ համայնքին: Իշխող կուսակցության ցուցակում կա ադրբեջանցի, ինչն ինքնին լավ է:

**- Անցողիկ տեղո՞ւմ է ադրբեջանցի թեկնածուն:**

- Ոչ, անցողիկ չէ, բայց գոնե թեկնածուն կա, իսկ հայ չկա ոչ մի տեղում այն դեպքում, երբ քաղաքում հայերը 12 անգամ ավելի շատ են, քան էթնիկ ադրբեջանցիները: Եվ ես կարծում եմ, որ առկա իրավիճակը կարելի է ընդունել որպես ապտակ հայ համայնքին եւ արհամարհանք այն ներդրմանը, որ հայ համայնքն ու մեր նախնիներն են կատարել այս քաղաքի համար: Միեւնույն ժամանակ, դա արհամարհանք է մեր ներուժի նկատմամբ: Ես չեմ ուզում մտածել, թե չինովնիկների կողմից ոչ մասնագիտական մոտեցում է, եւ որ իրենք չեն հասկանում, թե որքան ձայն կարող է բերել հայ թեկնածուն: Պարզապես նրանք մտածում են, թե հայերը ինքնաբերաբար կքվեարկեն իշխող կուսակցության օգտին:

**- Այսինքն՝ հայերի ընտրական վարքագիծը ծրագրված է քվեարկելու միայն իշխանությա՞ն օգտին:**

- Չէի ցանկանա կոչել զոմբիացում, բայց շատերը մտածում են, որ հայերը գնալու են ընտրելու թեկնածուներից մեկին: Սա կարծրատիպ է, եւ այն պետք է վերացնել: Եվ քանի որ սպասվում են հետաքրքրական փոփոխություններ, մասնավորապես, ամենայն հավանականությամբ ընդդիմությունը շատ համառորեն կպահանջի խորհրդարանական արտահերթ ընտրություններ եւ ձեւավորվելիք խմբերից յուրաքանչյուրին անհրաժեշտ կլինի այնպիսի էթնիկ խմբի էլեկտորալ աջակցությունը, ինչպիսին հայերն են, որ կազմում են ավելի քան 86 հզ. պաշտոնական տվյալներով, իսկ մեր տեղեկություններով՝ մոտ 120 հզ.:

**- Իսկ ինչպիսի՞ն է ընտրական ձեր գործունեությունը ներկայումս: Բացի ընտրությունների կուսակցական ցուցակներով քվեարկությանը չմասնակցելու կոչից, ի՞նչ է արվել:**

- Մեզ համար դժվար է մեր հայտարարությունները հասցնել հայ համայնքի ներկայացուցիչներին, քանի որ հեռուստատեսությամբ գրեթե բոլոր ուղիները փակ են, այստեղ եւս անտարբեր մոտեցում է հայ համայնքի հանդեպ, բացի ինչ-որ դրական երեւույթներից, երբ գովում են իշխանություններին, կամ խոսում է Վրաստանի նախագահի խորհրդական Վան Բայբուրդը՝ գովելու իշխանությունների մոտեցումները հայերին: Իսկ երբ մենք ցույց ենք կազմակերպում ի պաշտպանություն հայկական եկեղեցու, որտեղ շներ են ապրում, որեւէ լրատվամիջոց չի լուսաբանում: Դեռ լավ է, որ մեր ասուլիսներին գոնե մի քանիսը ներկա են լինում: Բայց այս ամենը հաղթահարելի խնդիրներ են, քանի որ մենք նոր ենք կայանում:

**- Իսկ ինչո՞ւ է ասամբլեան ստեղծվել հիմա:**

- Հայ համայնքի լոբբինգի կառույց ստեղծելու գաղափարը քննարկվում է արդեն հինգ տարի: Բայց մնում էր այդ քննարկումը զուտ խոսակցություն երեւի այն պատճառով, որ դեռ հնարավոր էր դիմանալ ու գուցե կային այլ՝ ավելի կարեւոր հարցեր: Հիմա իրավիճակն այնպիսին է, որ էլ դիմանալ չի լինում: Հիմնականում մեզանով կարող են հետաքրքրվել ընտրություններից առաջ, մենք էլ այդ ընթացքը կօգտագործենք մեր հարցերը բարձրացնելու համար, այսինքն այն պահին, երբ մեր կարիքը կունենան: Վատ է, որ մեր դաշնակիցները քիչ են, եւ խնդիրը ոչ թե կազմակերպություններն են, այլ անձինք: Իսկ Հայաստանից էլ գոնե մամուլի ուշադրությունը մեզ համար մեծ աջակցություն է: Համայնքին առնչվող ֆինանսավորումներ են լինում, որ լավ կլինի՝ ավելի անհրաժեշտ ծրագրերի վրա ծախսվեն:

**- Օրինակ, ի՞նչ ծրագրեր են ֆինանսավորվում, որ պետք չեն:**

- Օրինակ, «Վրաստան» թերթը:

**- Թերթի խմբագիրը Վրաստանի նախագահի խորհրդականն է՝ Վան Բայբուրդը: Նրա հանդեպ վերաբերմունքը կարծես անբարյացակամ է:**

- Իսկ ինչպե՞ս լինի բարյացակամ: Օրերս նրա հետ բավականին երկար վիճում էի, թե ինչու է նման բաներ հայտարարել ԵԽԽՎ-ում Լավրովի այն հայտարարություններից հետո, թե էթնիկ փոքրամասնությունները Վրաստանում բազմաթիվ խնդիրներ ունեն, ու ոտնահարվում են նրանց իրավունքները: Բայբուրդն էլ ի պատասխան ասել էր, թե Վրաստանում հայկական եկեղեցի են կառուցում (նկատի ունի Ս. Էջմիածին եկեղեցու հիմնանորոգումը, որն, ի դեպ, իրականացվել է հայ եկեղեցու ջանքերով), 500-ից ավելի հայկական դպրոցներ կան (որտեղ դասագիրք նորմալ հայերենով չես գտնի - Ա.Հ.): Ասում եմ իրեն, որ մեր երեխաների ապագան է ավերում՝ ստեղծելով հայի այնպիսի իմիջ, ինչպիսին ինքն ունի: Ու ի՞նչ է Բայբուրդը խորհուրդ տալիս Վրաստանի նախագահին կամ ինչպես է խորհուրդ տալիս, որ Թբիլիսիի քաղաքային խորհրդի ընտրություններում գոնե քաղաքավարության, պատշաճության համար մեկ հայ թեկնածու իսկ չկա: Ի դեպ, մենք համագործակցում ենք ԵԽԽՎ-ի հետ, այո, Վրաստանում մենք շատ խնդիրներ ունենք, բայց չենք ասում, թե տանկերով մտեք ու մեր հարցերը լուծեք: Եվ մենք ողջունում ենք ԵԽԽՎ ձեւաչափով խնդիրներ լուծելու ցանկությունը նաեւ Ռուսաստանի կողմից, այլ ոչ ռազմական ներխուժման ձեւով: Իսկ որ Բայբուրդն ասում է, թե Վրաստանում էթնիկ փոքրամասնությունների առնչությամբ վիճակը օրինակ կարող է ծառայել Եվրոպայի երկրների համար, դա վիրավորանք է հենց այդ երկրների հանդեպ, որտեղ ժողովրդավարությունը միայն հայտարարություն չէ: Սա եւս մեզ համար խնդիր է, քանի որ մարդիկ, որ հնարավորություն ունեն մամուլին առնչվելու, կեղծիքներ ու սուտ են տարածում:

**- Ի՞նչ եք ծրագրում անել այսուհետեւ:**

- Առաջին հերթին պետք է մեծացնել հայ բնակչության քաղաքական մասնակցությունը՝ Ջավախքի մեր հայրենակիցների հետ համագործակցությամբ, թեեւ չենք ֆորմալացնում այդ հարաբերությունները: Ուզում ենք նախ որոշել ինչ անել, ապա նոր կառուցվածքային ձեւ տալ:

**- Ի՞նչ ավարտ ունեցավ ձեր հանդեպ ներկայացված մեղադրանքը լրտեսության առումով: Արդյոք շարունակվո՞ւմ են սպառնալիքները կամ ճնշումները:**

- Որոշ մարդիկ անընդհատ ինձ փորձում են կապել այս կամ այն ուժերին: Երբ ինձ հայտարարեցին ռուսական լրտես, դրանից հետո փորձեցին ներկայացնել ինձ որպես ամերիկյան լրտեսի: Մեղադրել են նաեւ որպես վրացական լրտեսի, նաեւ հայկական: Շրջակայքում մնացել են Թուրքիան ու Իրանը, որոնց առնչությամբ դեռեւս մեղադրանքներ չեն հնչել: Միջազգային հանրությունն ինձ լուրջ աջակցեց, ու սուտ մեղադրանքները կարծես դադարել են: Տնտեսապես չեն փորձում ճնշել: Ինձ համար եւ շատ այլ լիդերների համար սա լուրջ փորձություն էր: Դա գրեթե մեկ տարի ահաբեկչություն էր, մշտապես ինձ հետեւում էին, հատկապես Ջավախքում: Ամեն դեպքում, ես ինձ Վրաստանի քաղաքացի եմ համարում, հպարտ եմ դրանով ու որ ես հայ եմ՝ Վրաստանի քաղաքացի: Մենք բոլորին կապացուցենք, որ այդ երկու հասկացությունները կարող են համադրվել ու արդյունք տալ:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Թբիլիսի-Երեւան

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

# Սպանվել է «Ալ Ղաիդայի» հիմնադիրներից մեկը

## *Ալժիրյան առաջնորդը հանձնվել է իշխանություններին*

**«Ալ Ղաիդան» հայտարարել է Աֆղանստանում իր առաջնորդ Մուստաֆա Աբու ալ Յադիզի մահվան մասին: Հունիսի 1-ին համապատասխան հաղորդում է զետեղվել իսլամիստների կայքերից մեկում, նշում է Ֆրանսպրես գործակալությունը:**

**SITE Group կայքի տվյալներով, Յազիդի մահախոսականում նրա մահվան պատճառները չեն նշվում, սակայն «Ալ Ղաիդայի» անունից համակիրներին ուղարկված հաղորդումներում խոսվում է ոչ միայն Յազիդի, այլեւ նրա կնոջ, երեք դուստրերի եւ թոռնուհու զոհվելու մասին:**

**Մուստաֆա Աբու ալ Յազիդը ծնվել է Եգիպտոսում, հայտնի է նաեւ Աբու Սաիդ ալ Մասրի անունով: Նրան համարում էին «Ալ Ղաիդայի» հիմնադիրներից մեկը: Հատուկ ծառայությունների տվյալներով, նա երկար ժամանակ ահաբեկչական կազմակերպության գլխավոր ֆինանսիստն էր եւ առաջնորդ Ուսամա բեն Լադենի «գերվստահյալ անձը»:**

**2008-ի օգոստոսին հայտնվել էին լուրեր, թե Յազիդը սպանվել է Պակիստանի տարածքում: Բայց «Ալ Ղաիդայի» հետ կապված «Թալիբան» շարժման ներկայացուցիչներն անմիջապես հերքել էին այդ լուրերը, իսկ ավելի ուշ հրապարակվել էր մի քանի տեսաերիզ Յազիդի ելույթներով:**

**«Ալ Ղաիդայի» հետ կապված մյուս նորությունն այն է, որ Ալժիրում իշխանություններին անձնատուր է եղել կազմակերպության հյուսիսաֆրիկյան մասնաճյուղի ղեկավար Ասման Տուաթին: Այդ մասին հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:**

**Ալժիրի ներքին գործերի նախարարի խոսքերով, 37-ամյա Տուաթին, որը հայտնի է նաեւ Աբու էլ Աբբաս անունով, որոշել է անձնատուր լինել՝ անսալով կնոջ հորդորներին, որը նրան խնդրել էր «թողնել հանցագործների ընկերությունը եւ տուն վերադառնալ»:**

**Ասման Տուաթին ակտիվորեն մասնակցել է 1990-ականներին իսլամիստների հակակառավարական ձեռնարկումներին, ինչպես նաեւ եղել է «Ալ Ղաիդայի» ալժիրյան ստորաբաժանման գաղափարախոսը:**

# «Ֆորբսը» հրապարակել է բանտարկված միլիարդատերերի ցանկը

**Ամերիկյան Forbes հանդեսը հրապարակել է բանտարկված կամ հետախուզման մեջ գտնվող միլիարդատերերի ցանկը, որտեղ հայտնվել են ռուսական «Յուկոս» նավթային ընկերության նախկին սեփականատեր Միխայիլ Խոդորկովսկին եւ «Մենատեպ» ֆինանսական ընկերության նախկին ղեկավար Պլատոն Լեբեդեւը: 2005-ից երկուսն էլ ութ տարով բանտարկված են հարկ վճարելուց խուսափելու մեղադրանքով:**

**Ցանկում հայտնվել է նաեւ Թաիլանդի նախկին վարչապետ Թաքսին Չինավատը: 2008-ին նա երկու տարվա բանտարկության դատապարտվեց կաշառակերության մեղադրանքով, իսկ 2010-ի մայիսի վերջերին նրան ներկայացվեց ահաբեկչության մեղադրանք:**

**Դատապարտված նախկին մագնատների թվում են տխրահռչակ միլիարդատեր, ֆինանսիստ Ալլեն Ստենֆորդը, Parmalat իտալական կոնցեռնի նախկին ղեկավար Կալիստո Տանցին, չին խոշոր ձեռնարկատեր Վոն Կվոն Յուն:**

AZG NEW PDF.qxd 01/06/2010 21:54 Page 1



# Երբ Նորին Մեծությունն իջեցնում է վարտիքը Անկարայի առջեւ

Ֆիլադելֆիայից հետո եւ Լոս Անջելեսից առաջ Լոնդոնում փետրվարի 10-ից մինչեւ մայիսի 3-ը անցկացվեց մի սքանչելի հետահայաց ցուցահանդես՝ նվիրված 20-րդ դարասկզբին Վանա լճի ափին ծնված Արշիլ Գորկուն (Ոստանիկ Ադոյան): Մուտքի ցուցանակը տեղեկացնում է, որ նրա հայրը շատ վաղ մեկնել է Միացյալ Նահանգներ, եւ որ «մնացյալ ընտանիքը տեղահանվել է 1915-ի ջարդերի ժամանակ, որոնք լայնորեն հայտնի են որպես 20-րդ դարի ցեղասպանություն: Միլիոնավոր հայերի հետ նրա ընտանիքը փախել է Ռուսահայաստան»: Կուզենայինք ճանաչել այդ «միլիոնավոր հայերին», երբ հայտնի է, որ դարասկզբին 2 միլիոնից ավելի հայ չկար Արեւմտահայաստանում (որն այստեղ հիմարաբար կոչվում է «Թուրքահայաստան»), եւ որ «ջարդերից» հետո մնացել էր առավելագույնը կես միլիոն:



«Նկարիչը եւ իր մայրը»

Ցեղասպանությանը վերաբերող մեղմ արտահայտությունն անգամ չափազանց խիստ թվաց Թուրքիայի իշխանություններին, որոնք գործի դրեցին իրենց ժխտողականության մեքենան: Արդյունքը եղավ այն, որ վերջին երկու-երեք շաբաթներին մուտքի հսկիչը այցելուներին բաժանվող յուրաքանչյուր բրոշյուրի մեջ գիտակցաբար խցկում էր մի թերթիկ հետեւյալ տեքստով. «Մենք գիտակցում ենք այն փաստը, որ բրիտանական կառավարությունը չի գտել որեւէ կանխամտածված գործողություն եւ որ նման պայմաններում պատերազմի ժամանակ՝ 1915-ին կատարված իրադարձությունները «ցեղասպանություն» չեն բառիս օրինական իմաստով»: Այդ «մենքը» կարող է պատկանել միայն «Թեյթ մոդեռնի» ղեկավարությանը: Թուրքերը ճնշում են գործադրել այդ հեղինակավոր ազգային թանգարանի տնօրենի վրա, որը ստանձնել է այդ տեքստի տարածո՞ւմը: Այդ դեպքում նա պետք է պախարակվեր եւ նույնիսկ պաշտոնանկ արվեր: Նորին Մեծության կառավարությունը որեւէ հերքում չի հրապարակել, ուստի պետք է կարծել, որ հենց կառավարությունն է տեղի տվել ճնշումներին, եւ որ այդ տեքստը Անկարայից ներողություն խնդրելու մի ձեւ է: Վերջերս Շվեդիան ներողություն էր խնդրել խորհրդարանի քվեարկությունից հետո: Այս անգամ (երբեմնի) հպարտ Ալբիոնն է ավելանում Անկարայի ոտնահարական ավարների ցանկին: Երբ մտածում ենք, որ Հայկական հարցի գլխավոր տարրերից մեկը 1916-ի բրիտանական Կապույտ գիրքն է, ուզում ենք ասել՝ ամո՜թ ձեզ:

КԼՈԴ ՄՈՒԹԱՖՅԱՆ
Լոնդոն-Երեւան

# 98-ամյա ավանգարդիստ Լուիս Բուրժուան հրաժեշտ է տվել կյանքին



Նյու Յորքում մահացել է 98-ամյա հանրահայտ նկարիչ, քանդակագործ Լուիս Բուրժուան, որի հեղինակած հսկայական սարդաքանդակներն հայտնի են ողջ աշխարհում: Փարիզում ծնված եւ Լուվրի դպրոցում ուսանած քանդակագործը, որ 1938-ին բնակություն է հաստատել Միացյալ Նահանգներում, իր ստեղծագործություններում օգտագործել է տարատեսակ նյութեր՝ ռետին, փայտ, քար, գործվածք: Ամենալայն ճանաչում ստացած նրա գործերը՝ սարդաքանդակները, քանդակագործը ստեղծել է 1994 թվականից 2003-ն ընկած հատվածում: Այդ գործերից ամենամեծը, որ կոչվում է «Մայրիկ», ցուցադրվել է 2007 թվականին Լոնդոնի «Թեյթ» պատկերասրահի գավիթում:

Ն. Պ.



2009-ի դեկտեմբերին Երեւանի պետական համալսարանի տպագրատունը հրատարակել է վաստակաշատ պատմաբան Վլադիմիր Պետրոսյանի «Ռուբեն Սեւակի աչքերով» խորագիրը կրող աշխատությունը: Այս հույժ արժեքավոր գիրքը (220 էջ) տպագրության է երաշխավորել Մեծ եղեռնի եւ Հայոց ազատամարտի «Ուխտատուն» թանգարան-ինստիտուտի գիտական խորհուրդը: Վլ. Պետրոսյանը գիրքը նվիրել է Ռուբեն Սեւակի ծննդյան 125-ամյակին, որ լրացավ փետրվարի 25-ին: Գրքում նորովի, միանգամայն թարմ փաստերով, իրողություններով հեղինակը ներկայացնում է Ռուբեն Սեւակի կյանքն ու գործունեությունը՝ զգալապես հարստացնելով սեւակագիտությունը:

Գիրքն ունի այլաբերական-փոխաբերական եւ ընդհանրացնող խորագիր՝ «Ռուբեն Սեւակի աչքերով»: Այդ այլաբերություն-փոխաբերությունը վերաբերում է հեղինակին՝ Վլ. Պետրոսյանին, որը Շվեյցարիայի հայկական համայնքի եռանդուն գործիչ, ջերմ հայրենասեր ու հայասեր, Հայաստանին ու Արցախին մշտապես սատար կանգնող Նազարեթ Սրամաքեշյանի հրավերով 2008-ի նոյեմբերի 20-ին մեկնում է Վիեննա, այնտեղից էլ՝ Շվեյցարիա: Ն. Սրմաքեշյանի, Ռուբեն Սեւակի եղբորորդի, սփյուռքահայ տաղանդավոր պատմաբան, ազգային-հասարակական երեւելի գործիչ Հովհաննես Չիլինկիրյանի, Սփյուռքի ազգային-մշակութային եւ քաղաքական նշանավոր գործիչ, Բեյրութում հրատարակվող «Նաիրի» թերթի խմբագիր Ժիրայր Նաիրիի ուղեկցությամբ Վլ. Պետրոսյանը շրջում է շվեյցարական այն վայրերում, շենքերում ու քաղաքներում, բնության գողտրիկ անկյուններում, ուր Լոզանի համալսարանում սովորելու եւ հետագայում, աշխատանքային գործունեության ընթացքում եղել է Ռուբեն Սեւակը: Այսինքն՝ գրքի հեղինակը խոր զգացումներով վերապրում է այն տեղանքը, շվեյցարական անզուգական բնապատկերները, բազմաբնույթ դեպքերն ու իրողությունները, տարբեր մարդկանց հետ հանդիպումները, որոնք սերտորեն կապվում ու առնչվում են Ռուբեն Սեւակին: Ո՛չ միայն վերապրում է, այլեւ դեպքերն ու դեմքերը, եղելություններն ու անցքերը մի տեսակ ներկայացնում է մեծ բանաստեղծի, ազգային-քաղաքական նշանավոր գործչի՝ Ռուբեն Սեւակի հայացքով, նրա ըմբռնումներով ու գնահատումներով: Բնական է, որ այդ ամենին էլ զուգակցում է իր դատումները, գնահատումներն ու ընդհանրացումները:

«Ռուբեն Սեւակի աչքերով» խորագիրը կրող աշխատությունը գիտականտեսական, վերլուծական-քննադատական լուրջ արժանիքներ ունեցող երկասիրություն է՝ գրված քաջահմուտ պատմաբանի, նաեւ բանաստեղծի բնաբուխ շնորհներով: Գնահատելի է գրքի կառուցվածքը, որն ունի 87 խորիմաստ ու բնորոշ վերնագրեր: Եվ այդքան վերնագրերով ոչ ծավալուն ակնարկներն ու էսսեները փաստարկված արտացոլում են տարաբնույթ դեպքեր, իրողություններ, իրադարձություններ, առանձին մարդկանց հայացքների, վարքագծերի գնահատումներ եւ այլն: Հասկանալի է, որ նկարագրությունների, մարդկային փոխհարաբերությունների առանցքը Ռուբեն Սեւակն է: Եվ այդ ակնարկներում, էսսեներում հեղինակի նկարագրությունների, վերլուծությունների տրամաբանական անցումները, մտքերի թելերն ագուցվում ու ստեղծում են Ռուբեն Սեւակի կյանքի ու գործունեության, աշխարհայացքի, բանաստեղծական ու փիլիսոփայական հայացքների գրեթե ամբողջական պատկերը՝ նոր բավահայտումներով եւ հավելումներով, սեւակյան նոր շրջանառվող փաստաթղթերով, վկայություններով, գրություններով:

Տարիներ առաջ մեկտեղված չկային Ռուբեն Սեւակի բոլոր ստեղծագործությունները, նրա ողբերգական կյանքի առանձին մանրամասներ, գրավոր թողած շատ գրություններ: Այդ եւ այլ պատճառներով մեր գրականության պատմության էջերում, առանձին հայագետների (Գ. Հասիսյան, Է. Ջրբաշյան, Վ. Կիրակոսյան եւ այլք) աշխատություններում Ռուբեն Սեւակն առավելապես երեւում էր միայն որպես տաղանդավոր քնարերգու բանաստեղծ: Ռուբեն Սեւակի գործերից շատերը ցրված էին մնացել «Մասիս», «Ամենուն տարեցույցը», «Ամենուն տարեգիրքը» եւ այլ պարբերականներում: Ընթերցողների լայն շրջանները, հատկապես սեւակագիտությամբ զբաղվող գիտնականներն անտեղյակ էին դրանց: Հայտնի է, որ Ռուբեն Սեւակը ժամանակին նպատակ է ունեցել մեկտեղել տարբեր շրջաններում գրած եւ տարբեր պարբերականներում տպագրված քերթվածները, արձակ գործերը եւ հրատարակել առանձին գրքով: Բայց կարճ կյանքը եւ ողբերգական մահն անկատար են թողել նրա այս եւ բազմաթիվ այլ մտահղացումներ:

Մեծ հայասեր, իհրավի մեծավաստակ ու բեղուն, խորագիտակ պատմաբան, Ռուբեն Սեւակի եղբորորդի Հովհաննես Չիլինկիրյանի, նրա այլ հարազատների ու մտերիմների, ինչպես նաեւ Վլադիմիր Պետրոսյանի եռանդուն ջանքերով վերջին տարիներին ե՛ւ Հայաստանում, ե՛ւ Սփյուռքի տարբեր վայրերում տպագրվել են Ռուբեն Սեւակի չափածո, արձակ գործերը, նամակները եւ այլ բնույթի գրությունները: Եվ վաղուց տպագրված, ինչպես նաեւ հրատարակված նոր գրքերում, այդ թվում եւ գրախոսվող աշխատության մեջ արդեն գրեթե ամբողջական է դառնում Ռուբեն Սեւակի տիտանական լուսավոր կերպարը:

# Ռուբեն Սեւակը՝ խորախորհուրդ ու հեռատես




Չխորանալով Վլ. Պետրոսյանի աշխատության բոլոր մանրամասների մեջ, որոնք անչափ կարեւոր են ու ուսանելի, ուշադրություն հրավիրենք հատկապես մի գլխավոր, առանցքային գերխնդրի վրա, որ մշտապես զբաղեցրել է Ռուբեն Սեւակին, եւ կարելի է ասել, հիմնականում դա է եղել նրա խոր մտահոգության, կյանքի ու գործունեության առանցքը՝ հայ ժողովրդի սոցիալականքաղաքական ճակատագիրը, որով մտահոգվելն էլ դարձել է մեծ ազգասերի ազգային-քաղաքական գերագույն նպատակը:

Վլ. Պետրոսյանը գրախոսվող գրքում գրում է, որ Առաջին աշխարհամարտի նախօրյակին, 1914 թ. հունիսին, Ռուբեն Սեւակը «խաղաղ ու ապահով Շվեյցարիայից վերադարձավ Կոստանդնուպոլիս՝ իր հետ բերելով նաեւ ընտանիքը: Նա վերադարձավ, որովհետեւ չէր կարող վերահաս վտանգի պայմաններում հեռու մնալ իր ժողովրդից» (էջ 190): Ուրեմն՝ Ռուբեն Սեւակը պարզորոշ տեսնում էր մոտալուտ վտանգը, իր ժողովրդի գլխին կուտակվող սեւ ամպերը: Պոլսում մեծ, ժողովրդանվեր գործունեություն ծավալեց Ռուբեն Սեւակը. աշխատեց Ազգային հիվանդանոցում, հայտնի Կեդրոնական վարժարանում եւ այլուրեք: Կ. Պոլսի Բանկալթիի շրջանում գտնվող Ռ. Սեւակի բնակարանը դարձավ առաջադեմ մտավորականների հավաքատեղի, նման Հովհ. Թումանյանի՝ Թբիլիսիում ստեղծած «Վերնատանը»: Ռ. Սեւակի բնակարան-հավաքատեղիում ստեպ-ստեպ տեղի էին ունենում գրական եւ, մանավանդ, ազգային-քաղաքական տարաբնույթ թեմաներով բանավեճեր, քննարկումներ: Այս բոլորից շատ առաջ, 1908-ին երիտթուրքերը, տապալելով Օսմանյան բռնապետական կայսրությունը, անցել էին իշխանության գլուխ: Նրանց միացել էին նաեւ հայ դաշնակները, որոնք հավատով էին լցված նոր իշխանության հանդեպ: Վլ. Պետրոսյանը գրում է. «Երիտթուրքական հեղափոխությունից դաշնակցական նշանավոր գործիչ Ակնունին (Խաչատուր Մալումյանը) եւ իր կուսակիցներն այնպես էին «գինովցել», որ հրապարակավ հրաժարվեցին ազգային-ազատագրական պայքարից ու առանց այլեւայլության հայտարարեցին. «Թուրքիաց Հայաստանը կը կազմէ կայսրութեան անբաժան մասը» (ընդգծումն իմն է. Ռ. Դ., էջ 35): Դժբախտաբար, այդ «գինովցածների» մեջ էին նաեւ հայ նշանավոր գրողներ, այլեւայլ մտավորականներ: Ռուբեն Սեւակը խոր, անասելի տագնապ էր ապրում. նա խորապես համոզված էր (մանավանդ Ադանայի 1909 թ. ցեղասպանությունից հետո), որ, ի դեմս երիտթուրքական կուսակցության, իշխանության է եկել թուրքական ազգային բուրժուազիան՝ իր շովինիստական, պանթուրանական ազգայնամոլական գաղափարախոսությամբ: Նույն դիրքերում էր նաեւ մշակութային, ազգային-քաղաքական մեծահռչակ գործիչ Արշակ Չոպանյանը: «Գինովցածներին» սթափեցնող կոչ անողների առաջին շարքերում կանգնած էր Անդրանիկ Օզանյանը՝ քաջազուն զորապետը, որը դեռեւս Ադանայի հայ բնակչության նախճիրի նախօրյակին, 1909 թ. սկզբին, Կ. Պոլսում եղած ժամանակ դաշնակցության ղեկավարներին զգուշացնում էր՝ ասելով. «Մեզի բոլորիս համար թուրքերը մեծ ու խոշոր թակարդ մը լարած են եւ մեզ ամէնքիս ալ մէջը պիտի ձգեն»:

Եվ Ռուբեն Սեւակը պարզորոշ տեսնում էր թուրք իշխանավորների «լարած մեծ ու խոշոր թակարդը», որը հայերից գողացավ պատմական բնիկ հայրենիքը, բարբարոսաբար ոչնչացրեց մեկուկես միլիոն հայերի: Մինչդեռ Ռուբեն Սեւակը հայրենի հողի ու հայերի փրկությունը տեսնում էր հայկական կուսակցությունների (որոնք միմյանց բզկտում էին, ինչպես մեր օրերում) եւ ժողովրդական զանգվածների կուռ միասնության ու համախմբվածության, «մարդկորեն կատղիլու» (Սեւակի արտահայտությունն է. Ռ. Դ.), այսինքն՝ ազգային-ազատագրական զինված պայքարով ազատագրվելը իրական դարձնելու մեջ...

Եվ մեծ մարգարեն՝ Ռուբեն Սեւակը, իր հոգու աչքերով տեսնում էր 1915 թ. եւ հետագա տարիներին տեղի ունեցած ցեղասպանությունը, այդ զարհուրելի նախճիրը, որ ցայսօր համաշխարհայնորեն չի դատապարտվել ու գնահատվել:

Եվ Վլ. Պետրոսյանի աշխատության էջերում, որոնք բազմերանգ, նոր փաստերի ու իրողությունների, տարբեր հայացքներ ունեցող անհատների, Ռուբեն Սեւակի նոր գրությունների ու երկերի, նրա ապրած վայրերի հիշատակների խոր տրամաբանական վերլուծությամբ, տիպական ընդհանրացումների ուժով վեր է հառնում իհրավի տաղանդավոր բանաստեղծ ու արձակագիր, ազգային-քաղաքական ճշմարիտ գործիչ, 30-ամյա Ռուբեն Սեւակի խորախորհուրդ ու լուսաճաճանչ կերպարը:

Վլ. Պետրոսյանի գիրքն անչափ խոսուն է ու բովանդակալից: Նրանում ներկայացվում են Ռուբեն Սեւակի քաղաքական ու ազգային նպատակամետ դասերը, այն ճշմարիտ գաղափարները, որոնք ուսանելի, հույժ կարեւոր ու կիրառական են մանավանդ մեր այսօրվա բարդ ու հակասական, խառնակ ժամանակներում:

ՌՈՄԱ ԴԱԼԼԱՔՅԱՆ

AZG NEW PDF.qxd 01/06/2010 21:55 Page 1



# Հաղթական մենամարտեր Քութայիսում

## Հայաստանում սուսերամարտի մասսայականությունն աճում է

Քութայիսում անցկացված սուսերամարտի միջազգային մրցաշարին մասնակցեցին Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի եւ Թուրքիայի սուսերամարտիկները: Հայաստանը մասնակցեց 4 թիմով: Հայ սուսերամարտիկները բավական հաջող ելույթներ ունեցան:

Մրցումների առաջին օրը մրցավեճի բռնվեցին կանայք: Ծկասուսերակրուհիների պայքարում հիանալի հանդես եկավ Արաբկիրի մարզադպրոցի սան Սուսաննա Ղազարյանը: Նա հաղթեց իր բոլոր մրցակցուհիներին ու մտավ եզրափակիչ, որտեղ պարտության մատնելով Վրաստանի ներկայացուցչին, նվաճեց առաջին մրցանակը: Հասմիկ Աղաբաբյանն ու Մանիկ Հակոբյանը գրավեցին 3-րդ տեղը:




Տղամարդկանց ծկասուսերակիրների եզրափակիչը հայկական էր: Գլխավոր մրցանակը վիճարկեցին Արմենակ Գասպարյանն ու Գեւորգ Հարությունյանը: Համառ մրցապայքարում ընթացած մենամարտը շահեց Գասպարյանը: Խոցասուսերակիրների մրցավեճում էլ եզրափակիչում հանդիպեցին Հայաստանի ներկայացուցիչները՝ Արաբկիրի մարզադպրոցի սան Սպարտակ Հարությունյանն ու «Հայաստան» մարզական միության Նորագավիթի մարզադպրոցի ներկայացուցիչ Ռոբերտ Խաչատրյանը: Հաջողությունն ուղեկցեց Սպարտակ Հարությունյանին: Մեր սուսերամարտիկները Քութայիսում հանդես եկան մարզիչներ Անդրանիկ Արազյանի, Գագիկ Հովհաննիսյանի եւ Ավետիք Պողոսյանի գլխավորությամբ:

Սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարության առաջատար մասնագետ Արթուր Սեդրակյանի հետ զրույցից պարզվեց, որ վերջին տարիներին սուսերամարտը հանրապետությունում սկսել է մասսայականություն վայելել: Ներկայումս մարզաձեւով զբաղվում են 570 պատանիներ ու աղջիկներ: Այսօր մարզաձեւի մարզադպրոցներ են գործում Նորագավիթում, Բյուրեղավանում, Գյումրիում, Վանաձորում: Մարզաձեւի զարգացման գործում զգալի աշխատանք է կատարում սուսերամարտի հանրապետական ֆեդերացիան, որը գլխավորում է սպորտի եւ երիտասարդության հարցերի նախկին նախարար, միջազգային կարգի սպորտի վարպետ Արմեն Գրիգորյանը: Միջազգային ֆեդերացիայի աջակցությամբ ձեռք է բերվել ժամանակակից գույք ու հանդերձանք: Այժմ էլ աշխատանքներ են տարվում Նորագավիթի սուսերամարտի մարզադպրոցը վերանորոգելու համար: Մարզադպրոցի երկարամյա տնօրեն Իշխան Մանուկյանի մահվանից հետո վերջինիս փոխարինել է նրա վաղեմի ընկեր եւ թիմակից Ալեքսան Նավասարդյանը, որը նաեւ խոցասուսերակիրների հավաքականի մարզիչն է:

Հայ սուսերամարտիկները մասնակցում են միջազգային մի շարք մրցաշարերի: Լավ համագործակցություն է ընթանում Վրաստանի եւ Իրանի ֆեդերացիաների հետ: Իրանում բնակվող միջազգային կարգի մրցավար Սերժ Ասատուրյանի հրավերով ամեն տարի հայ սուսերամարտիկները մասնակցում են միջազգային մրցաշարի: Այս տարի Իրանի Յազդ քաղաքում անցկացված աշխարհի գավաթի երիտասարդական խաղարկությունում Արմենակ Գասպարյանը գրավել էր 3-րդ տեղը: Հուլիսին մեր սուսերամարտիկները կմասնակցեն Լայպցիգում կայանալիք Եվրոպայի մեծահասակների առաջնությանը:

# Քառորդ եզրափակիչի մասնակիցները հայտնի են

Թենիսի «Ռոլան Գարոսի» մրցաշարում որոշվել են քառորդ եզրափակիչի մասնակիցները: Տղամարդկանց մրցավեճում պայքարը շարունակում են հաղթողի գլխավոր հավակնորդներ Ռոջեր Ֆեդերերն ու Ռաֆայել Նադալը: Ֆեդերերը հաղթեց Ստանիսլաս Վավրինկային (6-3, 7-6, 6-2), իսկ Նադալը պարտության մատնեց Թոմազ Բելուչիին (6-2, 7-5, 6-4): Պայքարը շարունակում են նաեւ Ռոբին Սոդերլինգը, Թոմաշ Բերդիխը, Միխայիլ Յուժնին, Յուրգեն Մելցերը, Նովակ Ջոկովիչը եւ Նիկոլաս Ալմագրոն:

Կանանց մրցաշարում պայքարից դուրս մնաց Վինուս Ուիլյամսը՝ պարտվելով Նադեժդա Պետրովային (4-6, 3-6): Իսկ ահա նրա քույրը՝ Սերենան հաջողությամբ հաղթահարեց Շահար Պեերի դիմադրությունը: Քառորդ եզրափակիչում կխաղան նաեւ Սամանտա Ստոսուրը, Ելենա Յանկովիչը, Յարոսլավա Շվեդովան, Ֆրանչեսկա Սկյավոնեն, Կարոլին Վոզնյացկին ու Ելենա Դեմենտեւան:

## Արազ Օզբիլիսը մարզվում է «Փյունիկում»

Հոլանդական «Այաքսի» հայազգի հարձակվող Արազ Օզբիլիսը ժամանել է Երեւան եւ մարզվում է «Փյունիկում»: Նրանով հետաքրքրվում է ոչ միայն «Փյունիկը», այլեւ ֆուտբոլի Հայաստանի երիտասարդական հավաքականի գլխավոր մարզիչ Ֆլեմինգ Սերիցլեւը: Թե նա, թե Վարդան Մինասյանը հնարավորություն կունենան ծանոթանալու ֆուտբոլիստի խաղային ունակություններին:

# Առջեւում վճռորոշ հանդիպումներն են

Ֆուտբոլի Շվեյցարիայի երիտասարդական հավաքականին չհաջողվեց ժամկետից շուտ եզրափակիչի ուղեգիր նվաճել: Ընտրական 2-րդ խմբի հերթական խաղում շվեյցարացիները հյուրընկալվելիս ոչ-ոքի (0-0) խաղացին Վրաստանի հավաքականի հետ:

9 խաղից հետո շվեյցարացիները 17 միավորով գլխավորում են աղյուսակը: Ավարտական խաղում՝ սեպտեմբերի 3-ին շվեյցարացիները հյուրընկալելու են խմբի հետնապահ իռլանդացիներին, որոնց հաղթելու դեպքում կգրավեն 1-ին տեղը: 2-րդ տեղում 13 միավորով թուրքերն են, որոնց մեկ միավոր է զիջում Էստոնիայի ընտրանին: ՀՀ հավաքականը 10 միավորով 4-րդ տեղում է: Վրացիները մեր ֆուտբոլիստներից մեկ խաղ պակաս են անցկացրել եւ 9 միավորով 5-րդ տեղում են: Վրաստանի հավաքականը եւս պահպանում է 2-րդ տեղը գրավելու հնարավորությունը: Դրա համար վրացիները պետք է հաղթեն մնացած երեք հանդիպումներում, որոնցից 2-ում մրցելու են հայերի հետ: Վճռորոշ կարող է լինել սեպտեմբերի 4-ին կայանալիք Թուրքիա-Վրաստան հանդիպումը: Մյուս խաղը թուրքերն անցկացնելու են իռլանդացիների հետ:

## Ջոնսոնի ռեկորդը մնաց անսասան




Օլիմպիական խաղերի եռակի չեմպիոն, 100 եւ 200 մ վազքի աշխարհի ռեկորդակիր, ճամայկացի արագավազորդ Ուսեյն Բոլտին չհաջողվեց գերազանցել 300 մ վազքում ամերիկացի Մայքլ Ջոնսոնի ռեկորդային ցուցանիշը: Չեխական Օստրավա քաղաքում անցկացված մրցումներում Բոլտը 300 մետրը հաղթահարեց 30,97 վրկ-ում: Իսկ Ջոնսոնը 2000-ին մրցատարածությունն անցել էր 30,85 վրկ-ում:

Նույն օրը Բոլտի հայրենակից Ասաֆա Պաուելը 100 մետր վազքում ցույց տվեց այս մրցաշրջանի լավագույն արդյունքը (9,83 վրկ), ինչը 0,03 վրկ-ով գերազանցում է մեկ ամիս առաջ հարավկորեական Տեգու քաղաքում Ուսեյնի ցուցանիշին:



# Միակ պարտությունը ճակատագրական էր Վարուժան Հակոբյանի համար

ԱՄՆ-ում բնակվող հայ 3 շախմատիստներ մասնակցեցին Չիկագոյում անցկացված շախմատի մրցաշարին: Առավել հաջող հանդես եկավ Վարուժան Հակոբյանը, որը 9 հնարավորից վաստակելով 6,5 միավոր, գրավեց 7-րդ տեղը՝ արժանանալով 433 դոլարի: Հակոբյանը շատ հաջող սկսեց մրցաշարը՝ տոնելով 4 անընդմեջ հաղթանակ Ժուստին Գարդների, Կեաթոն Կեւրայի, Ֆլորին Ֆելեկանի եւ Նիկոլա Սեդլակի նկատմամբ: Այնուհետեւ հետեւեցին երեք ոչ-ոքիներ Եվգենի Նայերի, Լյուկ վան Վելիի եւ Սամյուել Շանկլանդի հետ: Նախավերջին տուրում Հակոբյանը հաղթեց Մելիքսեթ Խաչիյանին եւ վաստակելով 6,5 միավոր, հոլանդացի Լյուկ վան Վելիի հետ գլխավորեց աղյուսակը: Ցավոք, ավարտական տուրում հայ շախմատիստը պարտվեց անգլիացի Մայքլ Ադամսին: Իսկ ահա հոլանդացի գրոսմայստերը պարտության մատնելով Շանկլանդին, վաստակեց 7,5 միավոր եւ դարձավ մրցաշարի հաղթող: Նա պարգեւատրվեց 10.200 դոլարով: 7-ական միավորով 2-5-րդ տեղերը բաժանեցին Մայքլ Ադամսը, Եվգենի Նայերը, Վիկտոր Միխալեւսկին եւ Ջիրի Ստոցեկը: Նրանցից յուրաքանչյուրը պարգեւատրվեց 2425 դոլարով:

Մելիքսեթ Խաչիյանը 6 միավորով 149 մասնակիցների մեջ գրավեց 15-րդ տեղը: Նա տարավ 4 հաղթանակ, նույնքան պարտիա ավարտեց ոչ-ոքի: Միակ պարտությունը Խաչիյանը կրեց Վարուժան Հակոբյանից:

ՖԻԴԵ-ի վարպետ Տաթեւ Աբրահամյանը եւս վաստակեց 6 միավոր եւ լրացուցիչ գործակիցներով հանգրվանեց 24-րդ տեղում: Աբրահամյանը տարավ 5 հաղթանակ, 2 պարտիա ավարտեց ոչ-ոքի, կրեց նույնքան պարտություն:

Հարկ է նշել, որ 1994-ից անցկացվող Չիկագոյի մրցաշարում Վարուժան Հակոբյանը 2008-ին 1-3-րդ տեղերն է բաժանել Տիգրան Պետրոսյանի եւ Հիկարու Նակամուրայի հետ: Անցյալ տարի Գաբրիել Սարգսյանը գլխավոր մրցանակը կիսեց Յան Էլվեսթի հետ: Իսկ 2000-ին չեմպիոն է հռչակվել Արտաշես Մինասյանը: Առավել հաճախ՝ 7 անգամ Չիկագոյի մրցաշարում հաղթել է Ալեքսանդր Շաբալովը:

# Լիլիթ Գալոյանը շարունակեց հաղթարշավը



Մայա Չիբուրդանիձեի անվան գավաթի խաղարկությունում հաղթարշավն է շարունակում Լիլիթ Գալոյանը: 6-րդ տուրում նա մրցաշարում 4-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց՝ առավելության հասնելով Մերի Ժորժոլիանիի նկատմամբ: 6 տուրից հետո Գալոյանը 4 միավորով 15-րդ տեղում է: Նա ընդամենը կես միավոր է զիջում 2-7-րդ տեղերում ընթացող Նարգիզ Ումուդովային, Լելա Ջավախիշվիլուն, Մակա Պուրցելաձեին, Գուլնար Մամադովային, Միրանդա Միկաձեին եւ Նինո Խուրցիձեին: Իսկ առաջատարը Սլովենիան ներկայացնող Աննա Մուզիչուկն է, որն առաջին կես միավորը կորցրեց Նինո Խուրցիձեի հետ մրցավեճում: Մուզիչուկն ունի 5,5 միավոր:

6-րդ տուրում Մարիա Գեւորգյանն ու Լիա Մարտիրոսյանը մրցեցին միմյանց հետ: Հաղթեց Մարիան, որը 3,5 միավորով 26-րդ տեղում է: Լիան 2 միավորով 44-րդ հորիզոնականն է զբաղեցնում:

7-րդ տուրում Լիլիթ Գալոյանը սեւերով կխաղա Նարգիզ Ումուդովայի հետ: Գեւորգյանի մրցակիցը կլինի Ինգա Խուրցիլավան, իսկ Մարտիրոսյանը կմրցի Մայա Մումլաձեի հետ:

## Եվս մեկ ուղեգիր

Սինգապուրում օգոստոսին կայանալիք ամառային պատանեկան օլիմպիական խաղերի հայ մասնակիցների թիվն ավելացավ եւս մեկով: Մրցումներին մասնակցելու իրավունք ստացավ նետաձիգ Վասիլ Շահնազարյանը: Իտալիայում անցկացված նետաձգության Եվրոպայի գավաթի խաղարկության պատանեկան մրցաշարում նա 87 մասնակիցների մեջ գրավեց 2-րդ տեղն ու արժանացավ օլիմպիական ուղեգրի: Այս պահին արդեն 8 հայ մարզիկներ իրավունք են ստացել մասնակցելու Սինգապուրի պատանեկան ամառային օլիմպիադային:

# Ֆրոչը մերժում է Աբրահամի առաջարկները

Երկրորդ միջին քաշային կարգում WBC-ի վարկածով աշխարհի նախկին չեմպիոն Կարլ Ֆրոչը նախկինի պես հրաժարվում է Արթուր Աբրահամի հետ մենամարտն անցկացնել Գերմանիայում: Աբրահամի ներկայացուցիչներն առաջարկել էին մենամարտել Շվեյցարիայում, սակայն կրկին մերժում ստացան: Այժմ էլ նրանք Ֆրոչին առաջարկում են մենամարտն անցկացնել իսպանական Մալյորկա քաղաքի ցլամարտի համար նախատեսված մրցապարեզում, սակայն կրկին մերժում են ստացել:

Կարլ Ֆրոչը ցանկանում է մենամարտել կամ հարազատ Նոթինգհեմում, կամ էլ ԱՄՆ-ում: Սակայն Աբրահամի ներկայացուցիչները մտադիր են հավատարիմ մնալ նախապես ձեռք բերված համաձայնությանը, ըստ որի մենամարտը պետք է կայանա Եվրոպայում: Բացի այդ էլ, Նոթինգհեմից նրանք առայժմ ոչ մի առաջարկ չեն ստացել, ԱՄՆ-ն էլ ֆինանսական տեսակետից չի հետաքրքրում Աբրահամի ներկայացուցիչներին:

## Հեմիլտոնը «Մակլարենին» առաջատար դարձրեց

«Ֆորմուլա-1» դասի ավտոմրցավազքի աշխարհի առաջնության հերթական փուլն անցկացվեց Թուրքիայում: Գրան պրիի հաղթող ճանաչվեց «Մակլարենի» ավտոմրցարշավորդ Լուիս Հեմիլտոնը: 2-րդ տեղը գրավեց Ջենսոն Բատոնը, 3-րդը՝ Մարկ Ուեբբերն էր: Վերջինս 93 միավորով շարունակում է գլխավորել ընդհանուր հաշվարկով մրցաշարային աղյուսակը: Նրան 5 միավոր է զիջում Բատոնը: Հաղթանակի շնորհիվ Հեմիլտոնը 84 միավորով տեղափոխվեց 3-րդ հորիզոնական:

«Կոնստրուկտորների գավաթի» խաղարկության առաջատարը «Մակլարենն» է, որը շնորհիվ Հեմիլտոնի հաղթանակի, շրջանցեց «Ռեդ Բուլին»: «Մակլարենը» 7 միավորով գերազանցում է մրցակցին: Լավագույն եռյակը եզրափակում է «Ֆերարին»:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

AZG NEW PDF.qxd 01/06/2010 21:55 Page 1



# Հայաստանի ամերիկյան համալսարանը՝ մշակութային դաշտում

## «Ագեան» ցուցասրահի բացումը



ARMENPRESS

Կերպարվեստի աշխարհի մարդկանց համար հրաշալի անակնկալ է նոր ցուցասրահի գոյությունը մեր քաղաքում. «Ագեան» արվեստի սրահը հեսայսու գործելու է Հայաստանի ամերիկյան համալսարանի «Փարամազ Ավետիսեան» մասնաշենքի IV հարկում, որի բացման արարողությունը տեղի ունեցավ երեկ՝ ներկայությամբ պաշտոնական հյուրերի, ԱՄՆ եւ Լիբանանի դեսպանների, մի շարք բարձրագույն ուսումնական հաստատությունների ռեկտորների, ՀԲԸՄիության, «Լինսի» Հայաստանի գրասենյակի տնօրենների եւ այլոց:

Բացման առաջին եւ միակ օրը ցուցասրահը հյուրընկալեց XX դարի հայ չորս լավագույն գեղանկարիչների՝ Մարտիրոս Սարյան, Մինաս Ավետիսյան, Սեյրան Խաթլամաջյան, Հենրիկ Սիրավյան: ՀԱՀ նախագահ **Հարություն Արմենյանը** շնորհակալություն հայտնեց այդ գեղեցիկ իրագործման համար, նկատելով, որ ՀԱՀ-ի գործունեության՝ արվեստի եւ մշակույթի այս նոր դաշտը համալսարանական կյանքի մի անհրաժեշտ մասն է, ինչի հանդեպ մտահոգություններ միշտ են եղել, այսօր դրա սկիզբն է դրվում՝ որոշակիացված արվեստի «Ագեան» սրահում: Համալսարանը՝ մասնագիտական կրթության եւ որակին զուգահեռ, կարեւորել եւ նույնքան առաջնայնություն է տվել այլընտրանքային գաղափարներին եւ անհատական նախաձեռնություններին:

Դ-ր Արմենյանի երախտիքի խոսքն առ Ագյան ընտանիքն էր, «մարդկային իդեալ տիպարին մոտեցող» Զավեն Ագյանին, գործարար աշխարհի մի մարդու, գյուտարարի՝ առանձնակի ուշադրությամբ՝ գիտությանն ու մշակույթին:

ՀԱՀ նախագահը երախտագիտորեն հիշեց ցուցասրահի կարելիություններին աջակցած նկարիչների ընտանիքների անդամներին՝ Ռուզան Սարյանին, Գայանե Ավետիսյանին, Շուշան Խաթլամաջյանին, Եկատերինա Սիրավյանին, կազմակերպիչներ Արմեն Պետրոսյանին եւ Զարմինե Զեյթունցյանին:

**Զավեն Ագյանը** դրվատանքի խոսքեր ասաց ՀԱՀ-ի գործունեության, արեւմտյան կրթական չափանիշներն ու որակը Հայաստան ներմուծելու համար, շնորհակալությամբ՝ «Ագեան» հիմնադրամին, բոլոր աջակիցներին ու ներկաներին:

Հունիսի 1-ին, Երեխաների պաշտպանության օրը այսպիսի ցուցասրահի բացումը, ըստ **Հասմիկ Պողոսյանի**, խորհրդանշական է երիտասարդ սերնդի համար՝ որպես ուղղորդիչ ազդակ՝ կրթական չափանիշների եւ արժեքների:

ԱՄՆ դեսպան **Մարի Յովանովիչը** թանգարան բառի՝ իբրեւ մուսաների վայր ստուգաբանությամբ, այսպիսի զուգահեռ անցկացրեց, թե որտեղ կարելի էր գտնել դրա համար ավելի լավ վայր, քան ՀԱՀ-ը եւ ավելի ներշնչվել, քան Սարյանի գործերով: «ԱՄՆ-ի ուսումնական հաստատություններում բարի ավանդույթ է այսպիսի կենտրոնների գոյությունը եւ լավ է, որ ՀԱՀ-ը դրա սկիզբն է դնում այստեղ»: (Նկատենք, որ Գեղարվեստի ակադեմիայում արդեն տարիների շարունակ հաջողությամբ գործում է «Ալբեր եւ Թովէ Բոյաջեան» ցուցասրահը-Մ. Բ.): Տիկին դեսպանը ուրախությամբ նշեց, որ արվեստի եւ գիտության հանդեպ հոգածության՝ Մ. Նահանգներում ունեցած իրենց փորձառությունը Ագյան ընտանիքը շարունակում է նաեւ այստեղ՝ Հայաստանում, հույս հայտնելով, որ հետագայում ցուցասրահը կներկայացնի նաեւ համաշխարհային մշակույթի գոհարներ՝ հարիր այսօրվան: Նմանապես **Րաֆֆի Հովհաննիսյանը** օրինակելի ու բարի գործ համարեց հայրենիքը կորցրած ընտանիքից սերված Ագյանների այս գեղեցիկ ներդրումը:

**ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ**

**Հ. Գ.** Զավեն Ագյանը ցուցասրահի կահավորման համար նվիրաբերել է 283.000 ԱՄՆ դոլար. «Ագեան» հիմնադրամը որպես կրթաթոշակ 500.000 ԱՄՆ դոլար է տրամադրել:

«Ագեան» ցուցասրահը հետագայում կներկայացնի հայաստանյան ժամանակակից գեղանկարիչներին, կլինեն 60-ականների ավելի քիչ հայտնի նկարիչների հետահայաց, ինչպես նաեւ՝ արտերկրի արվեստագետների գործերի ցուցադրություններ:

## ԾԱՆՈՒՑՈՒՄ

**Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների վիճակը եւ կազմը**

ՀՀ կենտրոնական բանկը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի դրույթներով, ներկայացնում է

### ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների վիճակի եւ կազմի մասին

2010 1-ին եռամսյակ (ներառյալ եզրափակիչ շրջանառությունը)

| | | | |
|---|---|---|---|
| **Եռամսյակի սկիզբ** | | | |
| I.Համախառն արտաքին ակտիվներ | | 2,003,675,650.04 | ԱՄՆ դոլար |
| այդ թվում՝ | | | |
| միջազգային պահուստներ | | | |
| (համախառն արտաքին ակտիվներ ազատ փոխարկելի արժույթով) | | 2,003,675,041.31 | ԱՄՆ դոլար |
| որից՝ | | | |
| ՀՓԻ ԱՄՀ-ում | 79,537,516.00 ՀՓԻ | 124,690,210.24 | ԱՄՆդոլար |
| պահուստային դիրք ԱՄՀ-ում | 0.00 ՀՓԻ | 0.00 ԱՄՆ | դոլար |
| II.Զուտ արտաքին ակտիվներ | | 1,363,783,517.51 | ԱՄՆ դոլար |
| որից՝ ազատ փոխարկելի արժույթով | | 1,363,782,908.79 | ԱՄՆդոլար |
| **Եռամսյակի վերջ** | | | |
| I.Համախառն արտաքին ակտիվներ | | 1,911,262,478.59 | ԱՄՆդոլար |
| այդ թվում՝ | | | |
| միջազգային պահուստներ (համախառն արտաքին ակտիվներ ազատ փոխարկելի արժույթով) | | 1,911,261,880.82 | ԱՄՆ դոլար |
| որից՝ | | | |
| ՀՓԻ ԱՄՀ-ում | 77,946,568.60 ՀՓԻ | 118,341,668.87 | ԱՄՆդոլար |
| պահուստային դիրք ԱՄՀ-ում | 0.00 ՀՓԻ | 0.00 | ԱՄՆդոլար |
| II.Զուտ արտաքին ակտիվներ | | 1,256,767,387.65 | ԱՄՆդոլար |
| որից՝ ազատ փոխարկելի արժույթով | | 1,256,766,789.87 | ԱՄՆդոլար |

**ՎԱՃԱՌՎՈՒՄ Է**

Զերմուկ առողջարանային քաղաքի կենտրոնում (Շահումյան փ. 22/1) վաճառվում է 1050 քմ հողամաս հասարակական նշանակության օբյեկտի կառուցման նպատակով: Հեռ. 093-10-05-05

www. azg.am

Կենտրոնական բանկի ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2010թ. մարտի 31-ի դրությամբ

| | 31 մարտ 2010թ. | 31 դեկտեմբեր 2009թ. |
|---|---|---|
| Հազար ՀՀ դրամ | | |
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | |
| **Ակտիվներ արտաժույթով** | | |
| Դրամական միջոցներ | 8,242,760 | 7,776,292 |
| Բանկերում եւ այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ | 310,780,745 | 221,678,070 |
| Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները եւ վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում | 399,132,235 | 459,234,675 |
| Վաճառքի համար մատչելի ակտիվներ | 917 | 917 |
| Մինչեւ մարման ժամկետը պահվող ակտիվներ | - | 25,171,087 |
| ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ | 103,336,943 | 101,621,324 |
| Այլ ակտիվներ | 837,519 | 666,956 |
| | 822,331,119 | 816,149,321 |
| **Ակտիվներ տեղական արժույթով** | | |
| Վարկեր եւ հակադարձ հետգնման պայմանագրեր | 60,461,959 | 70,735,139 |
| Վաճառքի համար մատչելի ակտիվներ | 121,046,395 | 121,204,193 |
| Մինչեւ մարման ժամկետը պահվող ակտիվներ | 3,927,851 | 3,862,867 |
| Հիմնական միջոցներ | 16,663,261 | 15,762,787 |
| Ոչ նյութական ակտիվներ | 498,578 | 427,907 |
| Այլ ակտիվներ | 2,542,374 | 2,451,325 |
| | 205,140,418 | 214,444,218 |
| **Ընդամենը ակտիվներ** | 1,027,471,537 | 1,030,593,539 |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ** | | |
| **Պարտավորություններ արտաժույթով** | | |
| Ֆինանսական եւ այլ հաստատությունների ավանդներ եւ հաշիվների մնացորդներ | 159,323,358 | 150,616,174 |
| Պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ | 16,447,200 | 1,329,188 |
| Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ | 97,739,659 | 95,263,527 |
| Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները եւ վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում | 114,808 | 36,588 |
| Այլ փոխառություններ | 28,764,520 | 28,309,397 |
| Այլ պարտավորություններ | 187,565 | 206,504 |
| | 302,577,110 | 275,761,378 |
| Պարտավորություններ տեղական արժույթով | | |
| Թղթադրամներ եւ մետաղադրամներ շրջանառության մեջ | 276,380,396 | 320,669,631 |
| Ֆինանսական եւ այլ հաստատությունների ավանդներ եւ հաշիվների մնացորդներ | 38,342,866 | 53,204,221 |
| Պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ | 176,030,098 | 177,194,796 |
| Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ | 191,432,871 | 172,556,583 |
| Այլ պարտավորություններ | 871,187 | 853,302 |
| | 683,057,418 | 724,478,533 |
| **Ընդամենը պարտավորություններ** | 985,634,528 | 1,000,239,911 |

| | 31 մարտ 2010թ. | 31 դեկտեմբեր 2009թ. |
|---|---|---|
| Հազար ՀՀ դրամ | | |
| **Սեփական կապիտալ** | | |
| Թողարկված կապիտալ | 100,000 | 100,000 |
| Գլխավոր պահուստ | 11,392,622 | 11,392,622 |
| Լրացուցիչ կանոնադրական կապիտալ | 85,663,194 | 85,663,194 |
| Վաճառքի համար մատչելի ակտիվների վերագնահատման պահուստ | (2,501,631) | (1,414,100) |
| Կուտակված վնաս | (52,817,176) | (65,388,088) |
| Ընդամենը սեփական կապիտալ | 41,837,009 | 30,353,628 |
| **Ընդամենը պարտավորություններ եւ սեփական կապիտալ** | 1,027,471,537 | 1,030,593,539 |

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 31.05.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: